




ԱՄԵՐԻԿԱ
ԿՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ
ՔԵՆԱՍԻՐԱԿԱՆ



ՊՈՅԱՐԱԿԱՆ ՀՐԱՄԱ. ԵՐԱԿԱՆ ՀԱՅ ՊՈՅԱՐԱԿԱՆ ՀՐԱՄԱ

ՏԵՂ 1960

ԼՂ.
ՏՐՎ

«Սիոն» մայնա շաբաթական հայութեա, ակադեմիա, արվեստ, գիտութեա, լեզու և լուսաւութեա

"SION" an Armenian Monthly of Religion, Literature and Philology
Printed in JERUSALEM

ԲՈՎԱՆԴԱԿԻ ԹԻՒԻՆ

	ԵՐԵՒ
Ա. ԶԱՏԿԻ ՊԱՏԳԱՄ	81
ԽՄՐԱԳՐԱԿԱՆ	
— Հայ եկեղեցականը եւ հաղպահականութիւն	83
— Եկեղեցականներու պատրաստքեան հարցը	85
ԿՐՈՆԱԿԱՆ	
— Շնորհի	87
— Կեակի իրական պարձանելը	91
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԿԱՆ	
— Ըստ՝ իմձ, Ակատ ...	95
— ԽԵՇՆԱՄՓՈՓՈՒՄ	96
— Ժայտ կեանիին	96
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ	
— Նարեկացին եւ հետագայ հայ գրականութիւնը	97
— Ստեփանոս Վ. բդ. Լեհացւոյ տապանագիրը	103
ՄԱՑԵՆԱԿՐԱԿԱՆ	
— Վարդան Վարդապետի «Հաւատարմաճար»	104
ԳՐԱԽՈՍԱԿԱՆ	
— «A Catalogue of Armenian Manuscripts»	107
— «Արևիանաց Քերականութիւն Հայոց Լեզուի Համեմատութեամբ 562 Լեզուների»	108
ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՐՆԵՐԻ	
— Նարեկայ Վ.անի	113
— Ապարանից Ս. Խաչ Վ.անի	114
Ո. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՄԵՆ	
— Նամակներ	115
— Հեռացիր	115
— Եկեղեցական-Քեմականք	116
— Պատօնականք	118
— Զատկական ուխտաւորութիւն	119
Նույրատութիւն մը Քրիստոփ Ս. Գերեզմանին	120

تصدرها - بطريركية الارمن الارثوذكسي - المدير والمقرر المسؤول - صاحب النشرة الاستف ماهيغازون ابراهيميان
ابربيل - مايو ١٩٦٠ طبع في مطبعة دير الارمن - القدس

≡ Ա Ւ Ո Ւ ≡

Լ. Տ. ՏԱՐԻ - ՆՈՐ ՇՐՋԱՆ

1960

◀ Ա.պրիլ-Մայիս ▶

Թիւ 4-5

Ս. ԶԱՏԿԻ ՊԱՏԳԱՄ

«Փառք յարաւբեան բա, Տէր»

Հաւատացեալ ժողովուրդ Հայոց որ ի Հայաստան և ի Ափիւռոս աշխարհի : Այսնի բարձունքին վրայ հանգչած Սրբոց Յակորեանց դարաւոր Աւատավայրէն, Քրիստոսի չարշարանաց և հրաշափառ Յարութեան լուռ վկայ՝ Սրբաւեղեաց հին քարերէն և հրաշազործ այրերէն կը միացնենք մեր ձայնը, Քրիստոնեայ աշխարհէն բարձրացող հրճուանքի և ուրախութեան ձայնին՝ ու կը դոչենք «Փառք հրաշափառ յարութեան քո, Տէր» :

Կեցած ենք նորէն, Միաբանութիւն և ուխտաւոր ժողովուրդ, Ս. Յակորեանց Տաճարի հնադարեան կամարներուն տակ, երբ տակաւին մեր ականջներուն մէջ կ'արձագանքին տիսուր և ապա յաղթական շարականները, զորս թափօրներով պատցուցինք Խաչի ճամբով մինչև Գողգոթա և Գողգոթայէն մինչև այն քարը՝ որ բացաւ մարդերու յոյսին առջև յարութեան արշալոյսը :

Մեզմէ ոմանց յոյզերը չեն հնադարտած տակաւին, ի յուշ պահերուն զորս ապրեցանք Խաչի ոտքին ծնրադիր Յաղի քո Քրիստոս երկիր պազաննեմքաը կրկնելով, և չեն չորցած թերես ոմանց արցունքները, որովհետև մեզմէ ամէն ոք Քրիստոսի հետ խաչելութիւն մը յիշեց երբ ըսաւ և կ զուրբ զշարչարանսն ոք բարեբաննեմք» :

Որքան քաղցր է յիշատակը տառապանքին ու ցաւին, երբ կ'ապրուի Խաչի խորհուրդին մէջ և կը նայի Յարութեան հաւատքի լոյսին :

Այս է իմաստը քրիստոնեայի կեանքին. Խաչի ճամբուն վրայ հաւատալ յարութեան և յարութեան ուրախութեան ընդմէջէն վերյիշել Խաչի ճամբան :

Մենք այս առաւօտ չենք կրնար չյիշել տառապանքի և անձկութեան օրերը՝ զորս ապրեցաւ մեր Աթոռը և մեր Աթոռին հետ Հայաստանեաց Եկեղեցին : Մենք չենք կրնար պահել այսօր որ այդ օրերուն զացինք Քրիստոսի Գերեզմանին, սրտապեղ մրմնչելու .

«Դու յարուցեալ զնացիս ի վերայ Սիոնի,

Ժամանակ զթալոյ նորա հասեալ է ժամ» :

Իսկ այսօր, նոյն Սիոնի բարձունքին կ'ոգեկոչենք՝ աւելցնելով, «Փառք յարութեան քո, Տէր»,

որովհետև զթացիք և վերայ Սիոնին և անոր ուխտեալ որդիներուն, և յարու, թիւն տուիր արդարութեան, ճշմարտութեան և սիրոյ ողիին:

Փառք կու տանք յարուցեալ Փրկչին որ այս տարի ևս չնորհեց մեր սիրեցեալ երկրին, առատութեան և խաղաղութեան իր պարզեր:

Փառք՝ որ ներչնեց մեր սիրելի Կառավարութեան՝ արդարութեան և հանրօգուտ ձեռնարկութեան ովին:

Փառք՝ որ աճեցուց փայլը թաղաւորական Գահին և անոր արդարակորով և արի Գահակալ Հիւսէյն Ա. Թաղաւորին:

Որովհետև անոնց հովանիին և հոգածու բարեխնամութեան կը պարտինք, Միաբանութիւն և ժողովուրդ, մեր ուրախ և ապահով կեանքք, իսկ Ս. Աթոռը՝ պաշտպանութիւնը իր ներքին օրէնքներուն, աւանդութիւններուն, կանոնաւուրութեան և հանդարտութեան, ընդդէմ օտարամուտ խառնակիչներուն և խոռ վարաներուն:

Որովհետև Հայոց գոհողութիւններով շահուած դարաւոր իրաւունքները, Միաբանութեան տքնութեամբ պաշտպանուած առանձնաշնորհումները և մեծ Պատրիարքներու օրով չէնցած մշակութային և կրօնական կեանքք՝ միտք երաշխաւորներն են Հայց. Եկեղեցւոյ անստանութեան և անպարտելիութեան:

Փոթորիկներ շատ եկած և փշրուած են այս պարիսապներուն տակ, փառասիրութիւններ ասուափի նման անցած են մեր երկինքէն և հոգիներէն, բայց պահպանուած ու պաշտպանուած է մեր Ս. Աթոռը, որովհետև միշտ եղած են հարազատ սիրտերէ բախող աղօթքներ. — «Դու յարուցեալ զթացիս ի վերայ Սիոնին»:

Հաւատացեալ Ուխտաւորներ,

Դուք որ եկաք հեռուներէն և ականատես վկաները եղաք փառաշուք տօնակատարութեանց, Վանքի մէջ տակաւ խաղաղութեան, զիտակցութեան և պարտաճանաչութեան գնոտով կեանքին, որ լաւագոյն զրաւականն է վաղուան, վերադարձէք ձեր տուները և տարէք հայկական Սիոնէն հոգեկան արիութեան աննուալ կայծը՝ զոր դարեր շարունակ ձեր հաւատաւոր նախնիքները առեր են այս սրբազան վայրէն ու պահեր իրենց ընտանեկան խորաններուն վրայ յորդւոց որդի: Ինչ որ մեր պատմութիւնը ըրած է այնքան սրտառուշ բայց նոյնքան աննահանջ իր գարաւոր դժոխքին մէջն իսկ, ատիկա բխումն իսկ է իր սրբավայրերուն: Հայրենիքէն հեռու, բայց սրբութեամբ գերազոյն կեղրանի մը մէջ՝ Ս. Յակոբը կը մնայ նոյն լուսաւորչի կանթեղ մը Հայուն հոգեկան աշխարհին վերե մշտավոր ու պայծառ:

Դարձէք և ձեզի սպասող սիրելիներուն տուէք Սիոնի յոյսն ու Տիրոջ օրնութիւնը, և բարեբանեցէք Աստուածը մեր հայրերուն, որ իր ցրուած փոքրիկ հօտը դեռ կը պահէ ու կը պահպանէ այս օտարութիւններուն մէջ՝ օրնուած ու գեղեցիկ օրերու համար, որուն խոր հաւատքով է որ կ'ապրինք մենք բոլորս:

Տէրը ի բարին կատարէ բոլորիս ուխար և տայ մեզի բազմաթիւ տարիներ և երթալ և բոլորուիլ իր Ս. Գերեզմանին շուրջ, ուրախ սրտով և զոհունակ հոգիով երգելու համար՝ «Փառք յարութեան քո, Տէր»:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆԸ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Հայ եկեղեցականներու կեսնքին մեծադոյն գժբախտութիւններէա՞մին եղած է քաղաքական զործերու խառնուելու փորձութիւնը։ Հակառակ այն իրողութեան որ հոգևոր զործունէութեան դաշտը այնքան ընդարձակ է և պատասխանատու, կարգչմը հոգևորականներ զիտակցաբար կամ անզիտակցաբար թոյլ կու տան որ քաղաքական ազդակներ և հոսանքներ գան ու խառնուին իրենց հոգևոր զործին։

Այսօր Հայաստանի մէջ ունինք սեփական կառավարութիւն, որ կը վարէ երկրին քաղաքական ճակատագիրը, իսկ արտասահմանի մէջ ալ կը գտնուին քաղաքական մեծամեծ կուսակցութիւններ, որոնք կրնան զբաղի քաղաքական զործերով՝ համաձայն իրենց պատկանած երկրին օրէնքներուն։ Եկեղեցականը ունի իր ուրոյն և սեփական զործը, հետևաբար պէտք չէ խառնուի իրեն չվերաբերող քաղաքական զործերու։

Եկեղեցականի մը զործունէութեան հարազատ դաշտն է Եկեղեցին։ Իր պարտականութիւնն է հոգ տանիլ իրեն վստահուած ժողովուրդին հոգևոր և բարոյական զարգացման, Եկեղեցական մը եթէ իղճի մտօք և արդիւնաւորապէս կատարէ իր այս պարտականութիւնը, արդէն իսկ զուտի հանած կ'ըլլայ այնպիսի մեծ զործ մը՝ որ արժանի կը դարձնէ զինքը երախտագէտ զնահատութեան։

Քաղաքական վարչածները երկրէ երկրի կը տարբերին և յաճախ կը մնան իրարու հակադիր։ Միևնոյն երկրին մէջ իսկ վարչութիւնները կրնան ենթարկուիլ յաճախակի փսխոխութեանց։ այդ վերիվայրումները պէտք չէ ազդեն հայ եկեղեցականներու հոգևոր զործունէութեան, որ բոլորովին տարբեր մակարդակի մը կը պատկանի անտարակոյս։

Եկեղեցին իրեն աստուածային հաստատութիւն ունի յաւիտենական սկզբունքներ և անփոփոխ ուղղութիւն, որմէ պէտք չէ շեղի երբեք։ Ուէ Եկեղեցական իրաւունք պէտք չէ զգայ պատահական հովերու առագաստ բանալով Եկեղեցւոյ նաւը ալեկոծութեան մատնելու։ Անհատական նախաձեռնութեամբ ու բարեկարգութեան մանկունակ փորձերը Եկեղեցին մէջ անկարգութիւն և անհշանութիւն յառաջացնելով՝ զայն քայլայելու միայն կը ծառայեն։ Հայաստանեայց Եկեղեցւոյ դարաւոր, նախանձելի և պատկառելի աւանդութիւնները լրջութենէ և խոնականութենէ զուրկ լնթացքներով պէտք չէ խախտել, Եկեղեցին տեսականութեան և բարզաւածման սիրոյն իսկ։ Այս կը պահանջուի ամէն հայ Եկեղեցականէ որ նախանձախնդիր է Հայաստանեայց Եկեղեցւոյ փառքին։

Հայ Եկեղեցականը պէտք է յանայ ուղիղ վարելու իր ակօսը և զգուշանայ աչ կամ ահեակ խոտորելէ։ Իր ձեռքը հոգեն մաճին վրայ դնող մշակը

պէտք չունի ոտքին տակ քաղաքական պատուանդաններ ճարտարելու : Հողիով երկինքի մէջ սաւառնիլ, իսկ միտքով ու մարմնով երկրի վրայ սողալ, ձախողութիւն միայն կը բերէ հայ եկեղեցականին : Հայ եկեղեցականը պէտք է իր ոտքերը պահէ կրօնական հաստատուն գետնի վրայ և զգուշանայ քաղաքական լարդուն զառիթափներու կողքին վերելակելու փորձերէ : Քաղաքական դարձուածներու և վերիվայրումներու թոհուրուին մէջ չէ որ պիտի դեզերի հայ եկեղեցականը իրեն ասպարէզ մը հայթայթելու համար, այլ արդէն իսկ աղաղակող նողերու կարօտութեանց ընդառաջ երթալով պիտի զտնէ իսկական ծառայութեան լայնարձակ դաշտեր : Ծառայելու կոչումը պէտք է որ խթանէ զինքը դէպի գործ, և ոչ թէ իշխելու և տիրելու սին ֆաւամոլութիւնը :

Փառամոլութեան կիրքը շատ եկեղեցականներու զահավէժ անկումին պատճառ է եղած : Փառամոլութիւնը, որ ինքնին դատապարտելի է, քաղից դատապարտելի կը դառնայ երբ փառամոլը չի վարանիր անուղիդ և անխոստով վանելի միջոցներ ալ կիրարկելու, գոհացնելու համար իր անյազուրդ ցանկութիւնը : Եկեղեցականը այնքան պէտք է խորշի զաղտնածածուկ գործերէ, որքան կը խորշի խաւարի իշխանէն՝ սատանայէն : Եկեղեցականի մը գործունէութեան դաշտը միշտ պէտք է ըլլայ բաց և լուսաւոր : Բարի գործերը լոյսի մէջ կը կատարուին և պէտք չունին մեկուսի կամ մութ թաքստոցներու : Խաւարի սէրը յատուկ է սատանային, և անոր հետեղները միայն կը փախչին լոյսէն : Աստուծոյ պաշտօնեան լոյսի և բարութեան սպասարկուն է զերազանցօրէն :

Եկեղեցական մը որ արհամարհանքով կը նայի Աստուծոյ և իր ժողովուրդին ծառայութեան, և հետամուտ կ'ըլլայ փափուկ աթոռներու և հանգըստաւէտ կենցաղի, ինքնին կը կորսնցնէ իր հոգեոր մշակի վարձքը : Նախ ծառայութիւն և ապա վարձատրութիւն, և այդ՝ առանց սակարկութեան : Պէտք է թողուկ Աստուծոյ կամքին որ իր ուղած ժամանակ և իր ուղած ձեռվ վարձատէ իր նուրիելալ պաշտօնեանները : Աստուծած անտես չ'ըներ զանոնք՝ որոնք իրենց կեանքը նուրիած են իր սիրոյ և խաղաղութեան թագաւորութեան ծաւալումին, որ է Եկեղեցւոյ զերազոյն նպատակներէն մին :

Եկեղեցին շինարար հաստատութիւն մըն է և ոչ թէ քանդիչ, և շինարար աշխատանք կատարելու համար անհրաժեշտ է ունենալ խաղաղութիւն : Աւը որ խաղաղութիւն չկայ, հոն մի՛ սպասէք որիէ արդիւնաւոր աշխատանք, Անոնք որ խաղաղութեան յարզը չեն զիտեր, անոնք որ իրենց զտնուած վայրը կուտադաշտի վերածելու կիրքը ունին, չեն կրնար օգտակար ըլլալ Եկեղեցիին : Եւ ինչ բան աւելի ձեռնտու է խախտելու Եկեղեցւոյ խաղաղութիւնը, քան քաղաքական շոշորդութեան անխորհուրդ պատեհապաշտութիւնը :

Մեր Եկեղեցիններն ու վանքերը խաղաղ և արդիւնաւոր կեանքի վառարաններ գարձնելու զիմաւոր պայմանը այն է որ Եկեղեցականները չխառնուին քաղաքականութեան : Հայոց վանքերուն իսկական կոչումն է ըլլալ հոգեոր մշակոյթի լուսաբուխ վառարաններ, հետևաբար ինչ բան որ կը խանգարէ այդ բարձր կոչումն իրագործումը՝ պէտք է հեռու պահուի մեր վանքերէն : Արդէն դաժան տարիններ դժբախտաբար քանդած ու աւելրած են մեր հարիւրաւոր վանքերը, և մատի վրայ համրուող նմոյններ միայն կը մնան մեզի . պէտք

դուրսպուրալ անոնց վրայ, և չընել ոչ մէկ բան որ կրնայ զանոնք տկարացնել, կամ վտանգել անոնց կացութիւնը։ Այս հոգածութիւնը պէտք է ցոյց տայ ամէն հայ և մասնաւանդ ամէն հոգերական։

Եկեղեցական և միայն եկեղեցական գործունէութեան պէտք է նուիրուի հայ եկեղեցականը։ Այս պէտք է ըլլայ կանոնը ամէն հայ եկեղեցականի, ինչ ասահճանի վրայ ալ գտնուի ան։

Հայ եկեղեցականներու միակ քաղաքականութիւնը պէտք է ըլլայ քաղաքականութեան շխառնուիլ։

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՆԵՐՈՒ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ

Ներկայ դարը, շատ մը ուրիշ հարցերու կարգին, ծնունդ տուած է նաև եկեղեցւոյ ծառայութեան համար անհրաժեշտ թիւով պաշտօնեաներու պատրաստութեան հարցին։

Հին դարերուն Եկեղեցին ունէր ոչ միայն պէտք եղած չափով հոգեորական պաշտօնեաներ, այլև շատ աւելին։ այնպէս որ դժուարութիւն կը զգար ոչ թէ եկեղեցականներու նուազութեան՝ այլ չափազանց առատութեան պատճառով։

Հիմա կացութիւնը բոլորպին փոխուած է, և քրիստոնէական շատ մը Եկեղեցիներ, որոնց կարգին և մեր Հայաստանեայց Եկեղեցին, կը տառապին հոգեորական պաշտօնեաներու պակասէն։ Ամէն տարի, աշխարհի հինգ ցամաքամասերէն դիմումներ կը հասնին Երուսալէմ, խնդրելով որ հոգեորական պաշտօնեայ մը զրկուի այս կամ այն եկեղեցին։ Ի՞նչպէս կարելի է դարմանել այս տիսուր կացութիւնը, և օժտել մեր եկեղեցիները անհրաժեշտ եկեղեցականներով։

Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Վանքը, ինչպէս յայնի է, վաղուց ի վեր եղած է մին Հայաստանեայց Եկեղեցւոյ հոգեոր այն կերոններէն, որոնք հասցուցած են Եկեղեցւոյ ծառայութեան գաշտին համար եփուն հոգեորականներ։ Ան հիմա ալ կը շարունակէ կատարել իր այդ պարտականութիւնը, բայց ոչ այն չափով որ ինքը կը փափաքէր և ուրիշները կ'ակնկալէն։ Այս անբաւականութեան պատճառները շատ են անշուշտ, բայց առաջինը և Այս համար կարերը պակասն է աշակերտներու, եկեղեցականութեան թեկնածուներու։ Այդ պակասը դարմանելու համար մենք կը խորհնիք քանի մը կերպեր։

Ա. — Այն համայնքները որնք պէտք ունին Եկեղեցականի, ամուսնացեալ կամ կուսակրօն, իրենք կ'ընտրեն իրենց թեկնածուն կամ թեկնածուն կամ կուսակրօն, իրենք կ'ընտրեն իրենց թասերու անդամներէն, կամ կիրակնօրեայ Վարժարանները, նախընտրաբար Դպրաց Դասերու անդամներէն, կամ կամ կիրակնօրեայ Վարժարաններու ուսուցիչներուն կամ աշակերտներուն շարքերէն, որոնք կու զաներու կամ կիրենց ուսման և տարիքին համաձայն դասարաններու մէջ կը երուսաղէմ և իրենց ուսման և տարիքին համաձայն դասարաններու պատճառներէն, զետեղուին և իրենց ուսումնական ընթացքը աւարտելէ ետքը կը ձեռնադրուին, հոս կամ իրենց պատճառն թեմին մէջ, և կը լծուին Եկեղեցւոյ ծառայութեան։

Բ. — Քահանայ հայրերը յատկապէս, աւելի քաշ ըմբռնելով Աստուծոյ ծառայութեան յարզը, իրենց զաւկաներէն մին, յարմարագոյնը, կ'ընծայեն Ե.

կեղեցւոյ ծառայութեան, վերակենդանացնելով հայոց հնագոյն այն նախանձելի աւանդութիւնը, որուն համաձայն քահանայական ընտանիքներու մէջէն քահանան անպակաս պէտք է ըլլայ: Եւ արդարու ունեցած ենք քահանայական հոյակաս ընտանիքներ, որոնք մինչև քսանհինգ, երեսունդ անընդհատ քահանաներ տուած են իրենց զիւղական կամ քաղաքային համայնքին:

Գ. — Եկեղեցականութեան կոչում զգացող երիտասարդներ, և կամ այդպիսի կոչման մը կանխահան նշանները ցոյց ուսուղ պատանիներ, իրենց ծնողներուն կամ ուսուցիչներուն թելադրութեամբ կը զրկուին Վանք և կը ստանան պատշաճ ուսում և դաստիարակութիւն, և ապա կը մտնեն Եկեղեցւոյ ծառայութեան մէջ:

Դ. — Այն ծնողները, որոնք որևէ պարագայի բերմամբ ուխտ են ըրած որ իրենց ունենալիք մէկ զաւակը Եկեղեցին պիտի նուիրեն; պէտք է կատարեն իրենց ուխտը, և խոստացուած զաւակը յանձնեն Եկեղեցին երբ ան ժամանէ պատանեկութեան տարիքին, յիշելով որ այդպիսի ուխտի զաւակներ են եղած, Հայաստանեայց Եկեղեցւոյ պարծանքներէն, Ներսէս Լամբրոնացին, Գրիգոր Տաթևացին, Գրիգոր Պարոնտէր:

Այս չորս կերպերուն միաժամանակ կիրարկումով կը կարծենք թէ կարելի կ'ըլլայ ձեռք բերել բաւարար և ընտիր ատաղձ: Անզամ մը որ հայթայթուի անհրաժեշտ և յարմար ատաղձը, ապա դժուար չէ ունենայ ուսուցիչ, դասազիք, դրամ, և ուրիշ ինչ որ պէտք է, այդ ատաղձէն կերտելու համար զիտակից և նուիրեալ հոգևորականներ:

Հոգեկորական ասպարէզը զրաւիչ դարձնելու համար թեմական իշխանութիւններէն կը սպասուի որ Եկեղեցականներու ապրուստը ապանովեն ըլլայ ամսավճարի դրութեամբ ըլլայ նուէրներով: այնպէս որ հայ Եկեղեցականի մը ապրուստի մակարդակը, իրեն բարձր ասպարէզի մը ծառայութեան նուիրեալ մէկ անձի, կարենայ հաւասարի բժիշկի մը, փաստաբանի մը, կամ ուսուցիչի մը ապրուստի մակարդակին:

Եկեղեցւոյ պաշտօնեան որքան վայելուչ կեանք ունենայ, այնքան պատիւ է իր համայնքին. Նետեաբար այս լուսաւորեալ դարուն մէջ Եկեղեցականի մը համար իր ընտանիքին ապրուստին հոգը ոչ թէ իր առաջին հոգը պէտք է ըլլայ, այլ վերջին:

Հայ ժողովուրդը տարակոյս չկայ որ արժանի է ունենալու լաւագոյն հոգեկորականները. Նետեաբար իր զաւակներուն լաւագոյնները, ամենէն ընտիրները, պէտք է տրամադրէ այդ նուիրական ասպարէզին: Երուսաղէմի Միաբանութիւնը իր առաջնակարգ պարտականութիւններէն մին կը նկատէ ընել իր բոլոր կարելին, պատրաստելու համար լաւագոյն հոգեկաններ, և այդ բանը կընայ ընել միայն՝ զիտակից գործակցութեամբը Եկեղեցասէր հայ ժողովուրդին:

ԿՐԹՆԱԾԿԱՆ

ՇՆՈՐՀԱԳՅՈՒՄ

Քրիստոնէական Եկեղեցւոյ ամենէն հիմնական վարդապետութիւններէն մէկն է չնորհքի վարդապետութիւնը : Կարելի չէ Քրիստոնէական կրօնքը էապէս ճանչնալ, առանց ճանչնալու շնորհքն ու անոր ուսուցումը Եկեղեցւոյ մէջ : Շնորհքը ոչ թէ երկրորդական սեղ կը գրատէ Քրիստոնէութեան մէջ, այլ՝ կարեսրազոյն Քրիստոնէական կրօնի խոկութիւնն ու ամբողջութիւնն է ան . այնքան որ խօսիլ Քրիստոնէութեան մասին կը նշանակէ խօսիլ շնորհքի մասին :

Քրիստոնէութիւնը կարելի է սահմանել ըսելով թէ Քրիստոնէութիւնը այն յայտնութիւնն է թէ Աստուած մեզ կը սիրէ . այս սիրոյն արդիւնքը ուրիշ բան չէ եթէ ոչ Շնորհքը : Քրիստոնէութիւնը կարելի է սահմանել ըսելով որ ան յայտնութիւնն է թէ Աստուած մեր Հայրն է . շնորհքը կը կայանայ արդարե մեզ Աստուածոյ գաւակները դարձնելու մէջ . զԱյն կարենալ կոչելու ռազար : Քրիստոնէութիւնը սահմանած կ'ըլլանք երբ ըսենք թէ ան յայտնութիւնն է թէ մենք փրկուած ենք Յիսուսուսով . այս կը նշանակէ թէ Քրիստոս միշտ շնորհք կու տայ որուն ազրիւն է ինք . Վերջապէս Քրիստոնէութիւնը կրնանք սահմանել ըսելով թէ ան Յիսուս Քրիստոսի կանոն է : Շնորհքը ուրիշ բան չէ եթէ ոչ Քրիստոնէութիւնը կրնանք սահմանել ըսելով թէ ան Յիսուս Քրիստոսի կանոն է : Շնորհքը ուրիշ բան չէ եթէ ոչ Քրիստոսի այս կեանքը մեր մէջ :

Ի՞նչ կը նշանակէ Շնորհք բառը : —

Շնորհք բառը մէկէ աւելի նշանակութիւններ ունի : Ընդհանուր առմամբ շնորհքը պարզէ մըն է, զոր Աստուած մարդոց կու տայ իր անհուն ազատութեամբ, առանց որ մարդը անոր արժանի գործ մը ըրած ըլլայ : Այս պարզեց — չնորհք — կրնայ տրուած ըլլալ թէ այս աշխարհի և թէ հանդերձաւին համար : Աւրեմն երկու տեսակ շնորհներ կան . — չնորհներ մեր ֆիզիքական կեանքին համար և չնորհներ՝ որոնք կը վերաբերին մեր հագեոր փրկու-

թիւն : Առաջինով կը հասկնանք բոլոր այն պարզեները որոնք մեզի տրուած են Արարիչին կողմէ . այսպէս՝ կեանքը, աշխարհը, հոգին, մարմնը, միտքը, առաքինութիւնը եալին :

Նեղ իմաստով շնորհք ըսելով կ'իմանանք բոլոր այն միջոցները և նպատակները՝ որոնք կրնան առաջնորդել մեզ յաւրիտենական կեանքի և փրկութեան : Շնորհքը հետևեալ ձևով կրնանք սահմանել . — Շնորհքը գերբնական պարզե մըն է զոր Աստուած ծրիօրէն մեզի կու տայ Քրիստոսի արժանիքներուն շնորհիւ, առաջնորդիու մեզ յաւրիտենական փրկութեան :

Կան արտաքին և ներքին շնորհքներ : Առաջինին մէջ կը մտնեն արտաքին բոլոր այն օգնութիւնները՝ որոնք մարզը կ'առաջնորդեն դէպի փրկութիւն . այսպէս՝ Աստուածոյ օրէնքները, Յիսուսի ուսուցութեանը, Աւետարանի քարոզութիւնը, սուրբերու օրինակները ևայլն : Խսկ ներքին շնորհքը այն է որ ներքնապէս կը զպի մարդուն և անոր բարի մտածութեան և ուուր փափաքներ կը ներշնչէ : Մարդ կը զգայ իր փորձառութեանէն, որ Աստուած զինք կը ներշնչէ այնպիսի խորուրզներով և փափաքներով՝ որոնք իրմէ չեն զար :

Հին Կտակարանի մէջ յաճախ կը կարդանք որ կրեայ ժողովուրդը և կամ այսինչ արդար մարդը շնորհք զտաւ Աստուածոյ առջիւ : Շնորհք զտաւ կը նշանակէ թէ այլ ևս հաճիլի մէկն է Աստուածոյ առջեւ . կը նշանակէ նաև որ Աստուած իրեն պարզե մը տուած է : Այս երկու նշանակութիւնները սերտօրէն կապուած են իրաբու : Մարդ ինքնիրեն և ապաւինած միայն իր սեփական ոյժիրուն մեղաւոր է, չի կրնար ինքնիրեն հաճիլի ըլլալ Աստուածոյ . ասոր համար անհրաժեշտ է որ ան Աստուածէ շնորհք ստանայ ու անով մաքրուի, սրբուի ու հաճելի ըլլայ Աստուածոյ :

Հին Աւխտը կը հաստատէ որ շնորհքը Աստուածէ արուած պարզե մըն է . անտաց շնորհս ժողովրդեան իմոյ առաջի եղիքափացւոցն . և յորժամ ելանիցէք, մի ելանիցէք դատարկեց (Ելից, Գ., 21) . անտեսէ չնորհս ժողովրդեան իրաւու առաջի եղիքափացւոցն (Ելից, ԺԱ., 3) . եղեկիւն մարգաբէութեան մէջ գեղեցիկ հաստուած

մը կը գտնենք չնորհքի մասին, թէ պէտև հան չնորհք բառին չենք հանդիպիր. «Եւ տաց ձեզ սիրտ նոր, և ողի նոր նորոգեցից ի ձեզ, և հանից զսիրտն քարեղէն ի մարմար ձերոց, և տաց ձեզ սիրտ մարմեղէն» (Եղեկ., ԼԶ., 26):

Նոր Կոտակարանի մէջ չնորհք բառը մէկէ աւելի իմաստներ ունի: Ան կը նշանակէ քարեցացակամութիւն մէկու մը նկատմամբ. «Եւ մանուկն անէր և զօրանայր լի իմաստութեամբ, և չնորհք Աստուծոյ էին ի վերայ նորա» (Ղկս., Բ., 40), «Այլ ոչ որպէս յանցանքն՝ նոյնպէս և չնորհքն. զի եթէ միոյն յանցանօք բազումք մեռան, ո՞րչափ ևս առաւել չնորհքն Աստուծոյ և պարզեք չնորհօք միոյն մարդոյ Յիսուսի Քրիստոսի, ի բազումս առաւելաւ» (Հոռվմ., Ե., 15):

Ենորհք կը նշանակէ հետեանքը կամ արդիւնքը քարեցացակամութեան, այսինքն բարիքը, ձրի պարգևը, որ կը տրուի մարդոց սրբութեան և փրկութեան համար. «Իորդակից եմք ձեր և աղաչեմք, մի՛ ընդունայն զշնորհսն Աստուծոյ ընդունել ձեզ» (Բ. Կորն., Չ., 1): «Զարմացան որք ի թլիքատութենէ անտի հաւատացեալք եկեալ էին ընդ Պետրոսի, զի և ի հեթանոսո պարզեք Հոգուոյն Սրբոյ զեղուին» (Պորձք, Ժ., 45): «Մի՛ անփոյթ առներ զշնորհացդ որ ի քեզ են, որ տուաք ենք մարգարէութեամբ ի ձեռնադրութենէ երիցութեան» (Ա. Տիմ., Դ., 14):

Ենորհքը անձի մը յատկութիւնն է, որ զինք հաճելի կամ սիրելի կը դարձնէ. — «Իանդի զի՞ն երախտիք իցն, եթէ յորժամ մեղանչիցք՝ տանջիցիք և համբերիցէք. այլ եթէ բարիս գործիցք՝ չարչարիցիք և համբերիցէք, այն չնորհք յԱստուծոյ են» (Ա. Պետ., Բ., 20):

Վերջապէս չնորհք կը նշանակէ ստացուած քարիքին ճանաչումը. «Միթէ չնո՞րհինչ ունիցիք ծառային այսմիկ, զի արարդամնեայն հրամանն» (Ղկս., Ժէ., 9): «Ելոյ մի ատապեալ եմ ես. ո՞վ ապրեցուցէ զիս ի մարմար աստի մահու. այլ չնորհքն Աստուծոյ ի ձեռն Յիսուսի Քրիստոսի Ծեան մերոյ» (Հոռվմ., Ե., 24-25):

Թէ ի՞նչ է Ենորհքը, ի՞նչ է անոր բնութիւնը, ի՞նչ կապ կայ չնորհքին մարդկա-

յին աղատ կամքի միջն. այս հարցերու նկատմամբ աստուծաբաններ տարբեր տարբեր կարծիքներ յայտնած են և անոնցմէ ոմանք ալ ինկած են ծանր սխալներու մէջ. Այս հարցերը աւելի մանրամասնելու և բացատրելու համար սկսինք սա հարցումով. — Անհնամենք է Ենորհիք:

Այս մասին երկու ծայրայի տեսութիւններ գոյութիւն ունին: Առաջինը, պաշտպանելու համար աղատ կամքը, կը չափազանցէ մարդկային կարողութիւնները և Կուրանայ անկրաժեշտութիւնը չնորհքին: Երկրորդը, ընդհակառակը, կը չափազանցէ մեր մարդկային տկարութիւնը և ազդեցութիւնը:

Առաջին խումբին կը պատկանին Բելակեաններ, կիսարելակեաններ և Բանապաշտներ: Բելակ (Ե. Պար) և իր հետեւրդները կ'ուրանային թէ՛ աղամական մեղքը և թէ՛ անկրաժեշտութիւնը Մկրտութեան և չնորհքին, և զերմօրէն կը պաշտպանէին մարդկային կամքի պատութիւնը: Ազատ կամքն ալ, կ'ըսէին անոնք, սուրբ է և կարող է բարին գործել, յաղթել փորձութեանց և աստուծային պատուիրանները պահել: Թէ մարդ իր անձնական կարողութեամբ և առանց աստուծային չնորհաց օժանդակութեան կրնայ հասնիլ յաւիտենական կիսանքի:

Կիսարելակեաններ, ընդունելով հանգերձ չնորհքին անկրաժեշտութիւնը փրկութեան համար, կը յաւակնին յայտարաբել թէ մարդ կրնայ անոր արժանանալ: Այս վարդապետութիւնը ուսուցուած է Cassianի կողմէ: Խանապաշտներ կ'ուրանան մարդուն գերբնական վախճանը, սկզբնական մեղքը և հետեւարել չնորհքի անկրաժեշտութիւնը, յայտարաբելով թէ մարդ կարող է իր ոյժերով հասնիլ իր ճակատապրին:

Երկրորդ խումբին կը պատկանին Բողոքականներ, Baianistesներ և Jansénistesներ: Բողոքականներ (Լութեր, Կալվին) բոլորովին հակառակ ծայրայեղութեան երթալով կը յայտարաբեն որ առանց աստուծային չնորհքի մարդ չի կրնար որեէ արդիւնաւոր, այսինքն յաւիտենական կիսանքի արժանի գործ ընել: Մարդկային ընութիւնը, կ'ըսեն անոնք, աղամական մեղքին պատճառաւ տկարացած է և խաթարացած է:

անհրաժեշտորէն չարը կը գործէ . իսկ արդարացած մարդը, չնորհաց ներգործութեամբ, անհրաժեշտորէն բարին կը գործէ :

Բայանիտեսներ (որոնց կրթագիրն է Բայն՛ ԺԶ. գարուն) կը վարդապետին թէ սկզբունական մեղքին պատճառաւ մարդ իր բնութեամբ խաթարուած և անկարող է մէջ մէկ բարի արարք ընել առանց Ծնորհքի : յանսենիտեսներ զրիթէ նոյնութեամբ կը կրինեն Լութերի և Բայնի ըստաները : Համ իրենց, Ագամի անկումէն ի վեր, մեղանչական մարզը ներքին ազտառութեամբ չունի :

Իրարու հակառակ և ծայրայիդ այս տեսակէտները ներքելու համար յառաջ կը բերինք հետեւեալ հաւաստութեամբ չնորհքի մասին . —

- 1) Թէ Ծնորհքը անհրաժեշտ է .
- 2) Թէ Ծնորհքը բացարձակապէս ձրի է ,
- 3) Թէ Ծնորհքը ամենուն համար է :

1) Ծնորհքը բացարձակապէս անհրաժեշտ է, վասնզի մարդ իր անձնական ճիգերով և գործերով ոչ կ'արդարանայ, ոչ կը փերկուի և ոչ իսկ կրնայ հաւաստալ . «Եւ արդ յԱստուծոյ է, որ ձեզ չնորհեցաւ վասն Քրիստոսի, ոչ միայն ի նա հաւասալ» այլ և վան նորա չարչարելո (Փիլ., Ա., 29):

Բելակեաններ կը յաւակնէին ըսել թէ ներքին չնորհքի անհրաժեշտութիւնը Ս. Գրքէն չի կրնար փաստուիլ : Անոնք կը սխալն չարչար, վասնզի մենք Ս. Գրքէն բազում վկայութիւններ ունինք թէ չնորհքը բացարձակապէս անհրաժեշտ է :

Սաղմոսերքուն կ'ըսէ . «Սիրա ուրբ հաստատեա յիս, Աստուած, և հոգի ուզիդ նորոգեա ի փորի իմումօ (Սղմ., Ծ., 12): Սրբազն Սաղմոսերքուն Աստուծմէ ոչ միայն օրէնքը կը խնդրէ, այլ նաև զայն գործադրելու ոյժն ու կարողութիւնը: Սաղմոսները, հոգեսոր այս սքանչելի բանաստեղծութիւնները, մշտական կոչեր են ասուածային չնորհքի:

Մեր Փրկիչը կ'ըսէ . «Ոչ ոք կարէ գալ առ իս, եթէ ոչ Հայրն՝ որ զիս առաքեաց՝ ձգեսց զնաւ (Յովհ., Զ., 44): Պօզոս Առաքեալի թուզթերուն մէջ յստակ կերպով կը պարզուի չնորհքի անհրաժեշտութիւնը . «Զինչ ունիս զոր ոչ իցէ առեալու Աւրիշ տեղ մը, Առաքեալը կ'ըսէ . սիրը ոչ եթէ

անձամբ բաւական եմք խորհիւ ինչ իբրև ի մէնջ, այլ բաւականութիւնն մեր յԱստուծոյ էն (Բ. Կորնթ., Գ., 5), Դարձեալ Առաքեալը, Ա. Կորնթ. ԺԵ. Գլուխին մէջ, որ գլուխ գործոց էջ մըն է Հոգիի անմահութեան և Յարութեան մասին, կը զրէ . Անձն չնորհքն Աստուծոյ եմ զինչ և իցեմ, և չնորհք ուրա որ յի՞ս ընգունայն ինչ ոչ եղին (Ա. Կորն., ԺԵ., 10): «Զի Աստուծուծ է որ յաջողէ ի մեզ զկամրին և զանոնեն վասն հանութեան» (Փիլ., Բ., 13), «Միխաթարեսցէ զսիրսու ձեր, և հաստատեսցէ յամեայն բանս և ի գործս բարութեան» (Բ. Թես., Բ., 16): Գործք Առաքելոցի մէջ կը կարունք թէ ինչպէս Աստուծուած բացաւ կրիպայի սիրտը, ուշագիր ըլլալու համար Պօզոս Առաքեալի քարոզչութեան (Գործք, ԺԶ., 14):

Մարդ իր նախաձնողաց մեզանչումով անկեալ և տկար բնութիւն մը առնի . առանց ի վերուստ տրուած աստուծային չնորհքի չի կրնար կատարել աստուծային բոլոր պատութիւնները : Բելակեաններ կ'ըսէին թէ կրնան: Պօզոս Առաքեալ կ'ըսէ . «Էլինչ էաքն մարմեսով (այսինքն տակաւին քրիստոնեայ չէինք եղած), կարիք մեղաց որ օրինօքն էին, զօրանային յանդամս մեր, առ ի պաշտարես առնելոյ զմեզ մահուն (Հոռովմ., Է., 5): Առաքեալի խօսքէն կը հետեւ ուրեմն որ մարդ առանց չնորհքի չի կրնար կատարել օրէնքները . եթէ կարենար՝ ուրեմն կրնար արդարանալ առանց չնորհքի: Նոյնպէս առանց աստուծային մասնաւոր օժանդակութեան (չնորհքի) չինք կրնար յազել ծանր փորձութեանց, քանի որ մեր բնութիւնը անկեալ և մեղանչական բնութեամբ մըն է: Ասոր համար մեր հանապարօքայ աղօթքն է «Եւ մի տանիր զմեզ ի փորձութիւն» :

Ծատ անգամ մարդ անկեզծօրէն բարին կը կամենայ. իր միտքովը և կամքովը կը փափաքի հասնիլ մաքրութեան և սրբութեան: Միւս կողմէն սակայն, մարգկային մարմինը իր պահանջներէն չի կրամարիր երբեք . կ'ուզէ իր պահանջներուն գոհացումը: Եւ ինչ են մեղքը և փորձութիւնը էապէս եթէ ոչ մեր մարմի պահանջներուն տիրակալութիւնը զօրաւոր կերպով մեր մտքին ու կամքին պահանջներուն .

պահ մը՝ յորում մեր կամքը կը պարտուի շաբաշը մեր կիրքերէն ու կը սարսափինք և կ'ամշնանք մեր իսկ անձնն։ Այսպիսի տառապալից հոգեվիճակի մը սքանչելի մէկ վկայութիւնը ունինք Հոռվմ. է. գլուխին մէջ (14-25)։

Այ միայն մեղաւորը, այլև արդարն անգամ առանց Ա. Հողիի օժանդակութեան և աստուածային մասնաւոր շնորհի չի կրնար ձերքազատուի բոլոր մեղքերէ և յարառաւել։ «Զի եթէ եօթն անգամ անկանիցի արդարն՝ կանգնեսցի (Առակ., Էթ., 16), սթանդի սեղաւմ ինչ յանցանհմք ամենենքեան (Թակ., Գ., 2). Նոյնը կը հաստատէ Ա. Յոզնաննէս սիրոյ առաքեալը՝ երբ կ'ըսէ. և եթէ ասլցեմք՝ եթէ մեղս ինչ մեք ոչ սննիմք, զանձննս խարեմք, և ճշմարտութիւն ի մեղ ոչ գոյշ (Ա. Յոզն., Ա., 8)։

2) Ծնորհքը բացարձակապէս ձրի է. անիկա երբեք վարձքը չէ մարդու բարի տրամադրութիւններուն. ան վարձքը չէ մարդու ճիգերուն. Կիմուռած չէ որնէ պայմանի կամ սխսի վրայ։ Ծնորհքը փոխարինութիւն մը չէ մարդկային արժանիքի մը, այլ բացարձակապէս ձրի պարզ։ Ծնն է, որ կը բիր Աստուծոյ գերազոյն սէրէն։ Աստուած կու առ զայն, իսկ մարդը կը ստանի։ Պողոս Առաքեալ իր Հոռվմայեցւոց Թուզթին մէջ կը գրէ. սիսկ եթէ չնորհոք, ոչ ևս ի գործոց պատթէ ոչ՝ չնորհքն ոչ ևս չնորհք լինին (Հոռվմ., Ժէ., 6)։

Եթէ չնորհքը ձրի է, ուրեմն վրկութիւնն ալ, որ պտուղն է Յիսուս Քրիստոսի մահուան, ձրի է Մարգուն վրկութիւնը Աստուծոյ մէկ չնորհքով կ'իրագործուի. մարդ չնորհքի միջոցաւ կը վրկուի. Հաւատքի և չնորհքի մեծ Առաքեալը՝ Պողոս այս վարդապետութիւնը սքանչելի կիրպով կը պարզէ Փաղատացւոց և Հոռվմայեցւոց գրած իր թուղթերուն մէջ, ցոյց տալով թէ մարդ կը վրկուի ոչ թէ օրէնքով և օրէնքի գործերով. այլ հաւատքով և չնորհքով։ «Զայս զիտեմք, եթէ ոչ արդարանայ մարդ ի գործոց օրինաց, եթէ ոչ ի հաւատոցն Յիսուսի Քրիստոսի. և մեք ի Քրիստոս Յիսուս հաւատացաք, զի արդարասցուք ի հաւատոցն Քրիստոսի, և ոչ ի գործոց օրինաց. զի ի գործոց օրինաց ոչ արդարացի ամենայն մարմին (Գաղտ., Բ.,

16)։ «Զի օրինոքն ոչ ոք արդարանայ առաջի Աստուծոյ, այն յայտ իսկ է. զի արդարն, ասէ, ի հաւատոց կեցցէ. բայց օրէնքն չեն ի հաւատոց, այլ որ արասցէ զայն՝ կեցցէ ի նոսին։ Քրիստոս զնեաց զմեկ յանիթից օրինացն, եղան վասն մեր անէծք. զի գրեալ է, թէ անմիծնալ ամենայն որ կախալ կայցէ զփայէտ (Գաղտ., Գ., 11-13). «Զի եթէ ի մրոյն յանցանաց մահ թագաւորեաց մրոյն, ո՞րչտի ես առաւել՝ որք զառաւելութիւն չնորհաց և զպարգեաց արդարութեանն առնուցուն, կենօք թագաւորեսցին ի ձեռն մրոյն Յիսուսի Քրիստոսի (Հոռվմ., Ե., 17). «Թէ այդպէս իցէ, ոչինչ զատապարտութիւն է այնոցիկ որ ի Քրիստոս Յիսուս, որ ոչ զնան ըստ մարմնոյ. զի օրէնք հոգւոյն կենաց ի Քրիստոս Յիսուս ազատեցն զիս յօրինաց մեղացն և մահու։ Զի որ անհնարինն էր օրինացն՝ որով տկարանային մարմնով, Աստուած զՈղիին իւր առաքեաց ի նմանութիւն մարմնոյ մեղաց և վասն մեղաց, և զատապարտեաց զմեղս ի մարմնի անդ. զի արդարութիւն օրինացն կատարեսցի ի մեզ, որք ոչ ըստ մարմնոյ զնայցեմք՝ այլ ըստ հոգւոյն (Հոռվմ., Բ., 1-4)։ «Զի թոշակն մեղաց՝ մահ է, այլ չնորհքն Աստուծոյ՝ կեանք յաւիսենից ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր (Հոռվմ., Զ., 23)։

Եկեսացւոց թուղթին մէջ, Առաքեալը միւնոյն գաղափարները և խորհուրդները կը շեշտէ. «Կենդանիս արար զմեղ ի Քրիստոս. քանզի չնորհօք ապրեցաք (Եփես., Բ., 5)։ «Զի չնորհօք նորա էք վրկեալք ի ձեռն հաւատոցն. և այս ոչ ի ձէնջ, այլ Աստուծոյ պարզ է» (Եփես., Բ., 8)։

Սրբազն Սաղմոսներգուն կ'ըսէ թէ երկրի վրայ արդար մարդ չկայ, ոչ խսկ մէկ անձ. բոլոր մարդիկ մեղանչած և զատապարտութեան տակ ինկած են։ Ու մարդ շատ անգամ չի կրնար արդար ըլլալ այն չափով՝ զոր Աստուած կը պահանջէ մեզմէ։ Մարդ չունի կարողութիւնը ինքինք արդարացնելու և վրկելու։ Ան կը ճգնի, կ'աշխատի ինքինքը ձերբազատել մեղքի կապանքներէն, ասկայն չի յաջողիր, քանի որ տկար էակ մըն է։ Փորձութեանց, նեղութեանց և գժուարութեանց առջև մարդ շատ անգամ կ'ընկրկի իր տկարութեան պատճառաւ։

Յ) Տրուած ըլլաւով որ փրկութիւնը չ'ի-
րագործուիր առանց չնորհքի և միւս կող-
մէն թէ չնորհքը բայարձակապէս ձրի է,
ուրեմն չնորհքը ամենուն համար է: Ան-
ընդհանրական է: Երբեք վերապահուած չէ
այս կամ այն ցեղին, այս կամ այն
դաստիարակին: Բոլոր չնորհներն ալ կ'ըն-
ծայուին բոլոր մարդոց: զանոնք հրաւի-
րելով փրկութիւն:

Աստուած բոլոր մեղաւորներուն բաւա-
րար չնորհք կու տայ, որպէսզի անոնք
զարձի գան և ապաշխարհին: Աստուած կ'ըսէ
իսրայէլի ժողովութիւնն: Ակենդանի եմ եօ,
ասէ Աղոսայի Տէր, ոչ կամիմ զմահ ամ-
պարշախին, որպէս զդառնուլ ամբարշտին ի
չար ճանապարհէ իւրմէ և կեալ: զառնա-
լով գալքարուք ի ճանապարհաց ձերոց չա-
րաց, և ընդէ՞ր մեռանիք տունդ իսրայէլին
(Եզեկ., լի. 11-12): Ուրիշ տեղ մը
զարձեալ: Անյապէս ասէ Տէր ամենակալ-
դարձարուք առ իս, ասէ Տէր զօրութեանց.
և գարձայց առ ձեզ, ասէ Տէր զօրութեանց
(Զաք., Ա., 3): Անչ եկի կոչել զարդարս,
այլ զեղաւորս յապաշխարութիւն (Ղիս.,
Ե., 32):

Թէպէտ չնորհքը կը մատուցուի բոլոր
մարդոց, սակայն անզիմադրելի չէ, պար-
ագալից չէ: մարդուն կը մեայ իր ազատ
կամքովը զայն ընդունիլ կամ մերժել:
Աստուած կը բախէ մեր հոգիներուն և
սրտերուն գռները, բայց չի պարտագորեր
մեզի բանալու մեր սիրտերը իրեն և ըն-
դունելու իր չնորհքը: Ս. Օգոստինոս կ'ըսէ:
Աստուած որ մեզ ստեղծեց առանց մեզի,
չուզեր մեզ փրկել առանց մեզին: Ուրեմն
մենք ազատ ենք գործակցելու կամ գի-
մարդելու չնորհքին:

ՆԵՐՄԱՆ ՎՐԴ. ԲԱՊՈՒԽՃԵՆԱՆ



ԿԵԱՆՔԻ ԻՐԱԿԱՆ ՊԱՐՄԱՆՔԸ

(Երեւման Խաչի տօնին առքիւ)

•

Այլ ինձ եաւ լիզի պարել, բայց միայն ի
խաչ Ցեան մերոյ Յիսուս Քրիստոս,
ուով ինձ աւտարն ի խաչ ելատ է, եւ ես
աւիստիւ (ԳԱՂ. Զ. 14):

Աստուած ամէն մարզու ապրելու հա-
ւասար իրաւունք տուած է: Իւրաքանչիւր
անհատ առանձնաշնորհումն ունի աշխարհի
այլատեսակ բարիքներու վայելումով եր-
ջանկանալու և ուրիշները երջանկացնելու:

Ոչ կեղինակութիւն ունի ուրիշը զրկե-
լու իր ապրելու իրաւունքէն: Բայց պէտք
չէ մոռնալ թէ ապրելու տեսակները կան:

Ունանք կ'ապրին կեանքի վերելքի սահ-
գուին ամենասատորին աստիճաններուն
վրայ: Ասոնց նշանարանն է միայն իրենց
անձը ապրեցնել: Այդպիսիններուն համար
ապրի կը նշանակէ լոկ ուտել, խմել,
զուարձանալ և իրենց ֆիզիքական գոյու-
թիւնը պահպանել: Հոգ չէ թէ իրենց այդ
կարիքներուն անսուզի միջոցներով գուշա-
ցումը վնասարեր ըլլայ: Ուրիշներու:

Ուրիշ գասակարգ մըն ալ կայ որ քիչ
մը աւելիք բարձր մակարգակի վրայ կ'ապրի:
Այս գասակարգը նախորդէն կը տարրերի
անզ որ թէն կ'ապրի առանց ուրիշներուն
բարիք ընելու, բայց կ'աշխատափ, գէթ կա-
րելիութեան սահմանին մէջ, վլսու չհաս-
ցընել անոնց:

Երբորդ գասակարգի պատկանող մար-
դեր ալ կան, որոնք կեանքի այս երկու
աստիճաններէն աւելիք բարձր մակարդակի
վրայ կը կենան: Ասոնք իրենց գերազոյն
հաճոյքը ոչ թէ իրենց անձը ապրեցնելու
կամ ուրիշներու վլսու չպատճառելու, այլ
այլոց օգտակար ըլլալու մէջ կը փնտանեն:

Այս երեք տեսակ ապրելակերպերէն ա-
ռաջինը նախապատճական շրջանի վայրենի
ցեղերուն ապրած կեանքը կը ներկայացնէ:
կեանք մը՝ որ լիովին անձնասիրական է,
և որուն կենդանական կեանքէն ունեցած
միակ տարբերութիւնը այն է որ մինչ կեն-
դանիները կ'ապրին բնազդարար, այս կարգի
մարդեկ կ'ապրին մասամբ բնազդարար և

մասամբ գիտակցորէն։ Բայց սկզբունքով երկուքն ալ անձնասիրական են, և իրենց հացը կը խւեն ուրիշներու ձեռքէն՝ անոնց վկաս պատճառելով և անոնց իրաւունքները ստնակոխելով։

Երկրորդ տեսակ ապրելակերպը կը ներկայացնէ կիսակիրթ ցեղերուն ապրած կեանքը, որ թէս անձնասիրութենէ քիչ մը վերէ, բայց կը բաւականանայ ուրիշն վկաս չտալով միայն։ Անէկ անդին չի կրնար կեանքի մէջ արժէք մը տեսնել կամ փնտոել։

Իսկ երրորդ տեսակ ապրելակերպը կը ներկայացնէ քաղաքակիրթ, անձնական կիրքիրէ ազատազրուած ու հշմարիտ քրիստոնեայի վայել բարձրագոյն կեանքը։

Առաջին երկու զասակարգերուն պատկանող մարդոց ապրելակերպին մէջ շատ չենք հանդիպիր կեանքի զսմագոյն արժէքներուն։ օրովհետեւ այդ տեսակ ապրելակերպիր մէջ կեանքի առանցքը մարդու անձն է։ Մեղքը արդէն ուրիշ բան չէ իթէ ոչ անձնասիրութիւն։ Բայց երրորդ զասակարգի մարդոց ապրելակերպը լի է կեանքի զեհագոյն արժէքներով։ քանզի հոն անձնասիրութիւնը տեղի տուած է այլասիրութեան։ Ուր որ այլասիրութիւն կայ, հոն Աստուած ներկայ է։ Վասնզի մեր Տէրը գերազանցորէն այլասէր էակ մըն է, սիրոյ կատարեալ մարմացումը, ինչպէս կը տեսնենք զայդ Յիսուսի ապրած սիրոյ բարձրագոյն կեանքին մէջ։ որ ամենացայտուն կիրպով ի յայտ եկաւ Գողգոթայի խաչին վրայ։

Այս երրորդ տեսակ ապրելակերպը քրիստոնեական կեանքի պտուղն է, Աստուածոյ հետ ապրուած ներդաշնակ կեանքի մը հետեանքը։ Այս բարձր կեանքը ձեռք կը բերաւի օրտի փոփոխութեամբ և Աստուածոյ հետ կինդանի յարաբերութեամբ։ Այս տեսակ ապրելակերպի մէջ է որ իրական ու մնայուն արժէքներ կան, և անոնցմով է որ մարդ կրնայ իրաւամբ պարձենալ այս անցաւոր աշխարհի մէջ։ Այս բարձր կենցաղը Յիսուսի խաչին վրայ արտայայտած սիրոյ վեհագոյն կեանքին ճառագայթումն է։

Խաչը Հայց։ Եկեղեցւոյ մէջ տարին չորս անգամ կը տօնուիր և եթեւման խաչը այդ չօրս տօներէն առաջինն է, և յիշատակն է երկինքի վրայ Խաչին լուսափայլ երկումին՝ որ տեղի ունեցաւ 351 թուականին,

Երուսաղէմի մէջ։ Օրուան Պատրիարքը՝ կիւրեղ Եպիսկոպոս, այս գէպին նկարագրութիւնը ատենին հազորդած է Կոստանդիանու թ., Կայսեր նամակով մը՝ որ հայերէնի թարգմանուած է ու ամէն տարի այտօնին առօթով կը կարգացուի մէր եկեղեցներին մէջ։ Յոյնիրը այս գէպին յիշատակը կը տօնին Մայիս 7ին, իսկ մենք հայերս՝ Յիսուսին Ե. կիրակիին։

Խաչը Պօղոս առաքեալի կեանքին գերագոյն պարծանքն էր։ այս խոկ պատճառաւ ան կ'ըսէ։ «Բայց ես քայլ լիցի որ պարծենամ, հապալ միայն Տեր Յիսուս Քրիստոսի խաչովը, որով աշխարհ ինձի խաչը ելած է եւ ես՝ աշխարհի; Առաքեալը այս խօսքով կը պարծենայ Յիսուս Քրիստոսի խաչովը և այդ խաչին վրայ յայտնուած սիրոյ բարձրագոյն կեանքի արժէքներովը միայն։

Ա. — Դալասիոյ ժողովուրդին պարծենք։ — Դադատիս կոչուած հողամասը կը գտնուի Փոքր Ասիոյ մէջ, Բիւթանիոյ հարաւային կողմը։ Դադատիս անունը իր ծագումը տածած է Կոլս (Gauls) կամ կելտա (Celts) բառէն։ Փրկչական թուականէն 280 տարի տաաջ. այս անունով երեք ցեղեր եւրոպայէն, ըստ ոմանց Գաղղիայէն, զաշմելով եկան ու հաստատուեցան հոս, աեղացի բնիկ ցեղերը իրենց հպատակեցնելով։ Եւ իրենց անունով երկիրը կոչուեցաւ Կոլս կամ Կալիխիա՛՝ որ հայերէն լիցուով թարգմանուած է Գաղատիս։ Երբ Հովովմի պետութիւնը սկսաւ տարածել իր ազգեցութիւնը Փոքր Ասիոյ վրայ, Գաղատիսն եղաւ Հովովմէական նահանգներէն մին։

Կոլիրուն գրաւումէն առաջ, Գաղատիոյ մէջ կային նաև, բնիկ ցեղերէն զատ, յոյներ և բաւական թուուվ կրհանիր։ Երբ Ա. Պօղոս քրիստոնէութիւնը տարածեց հոն բնակով ցեղերուն մէջ, հրեայ քրիստոնեաները տիրուու տարր մը դարձան նորակազմ Եկեղեցւոյ մէջ։

Գաղատիոյ ժողովուրդը բնաւորութեամբ շատ տաքարիւն և զիւրագրգիս էր։ շուտ կը խանգամառուէր և շուտ կը յաւահատէր։ Ասիկա ընդհանրապէս խառնըւած քն է շատ մը տգէտ ժաղովուրդներու։ Մոլեռանդ հրեայ քրիստոնեաները, Պօղոս առաքեալի բացակայութենէն օգտուելով, հեթանոսութենէ գարձած քրիստոնեաներէն

կը պահանջէին որ թիգատուին, Շաբաթը պահեն և Մովսէսի օրէնքին տրամադրուեթիւնները յարգին։ Ուրիշ խօսքով, քրիստոնեաց իսլամով միասին լաւ հրեայ ըլլան։ Այդ պատճեառաւ Գաղատիոյ Եկեղեցին մէջ մեծ յուղում և իրարանցում ստեղծուած էր։

Գաղատիոյ հրեայ քրիստոնեաները կը պարծենային թէ իրենք Արքահամելու սերունդ են և Մովսիսական օրէնքը կը յարգին։ Հեթանոսութիւնէ գարձի հկած տգէտ քրիստոնեաներն ալ իրենց հետեւելզի հրեաց կրօնի արտաքին ձեւկերպութիւններով կը պարծենային։ Պօղոս առաքեալ երբ Գաղատիոյ Եկեղեցին համար իր նամակը մըր գրէր, ի մտի ունէր այս կացութիւնը՝ Ուստի զրեց այդ Եկեղեցին և բաւ։ Այդ ոչ թթվատութիւն ինչ է, և ոչ անթիգառառթիւն, այլ նոր արարածն (Գաղ. Զ. 15)։ Ան ըստ նաև. Թթայց ես քառ լիցի որ պարծենամ, հապա միայն մեր Տէր Յիսուս Քրիստոսի խաչովը, որով աշխարհ ինծի խոչը ելած է, և ես աշխարհի։

Այս խօսքերով Ս. Պօղոս զգուշացնել կը ջանար անսնց՝ որոնք արտաքին ձեւակերպութիւններով կը զրազին, որպէսովի կրօնի կեզեռվէ չհետաքրքրութիւն, այլ սրտի փոփոխութեան ու հոգեոր կեանքի զարգացման մէջ փնտաեն իրենց բարոյական հաճայքն ու ներքին գոհացումը։ Բանզի այդ էր թայուն պարծանքը և իրական արժէքը մարգակային կեանքի մէջ։ Եւ քրիստոնէութիւնը կոչում ունէր առաջուած ունէր աւետելու զայն մարդոց։

Բ. — Աօստարի պարծանքը։ — Գաղատիոյ ժողովուրց քրիստոնէութեան նոր գարձած ըլլալուն, աշխարհէ կարեսր տեղ բռնած էր տակաւին իր սրտին մէջ։ Աշխարհ իր պարծանքը կը փնտոէ ընդհանրապէս տեսանելի բաներուն մէջ։ Աղքատ մը եթէ բախտի բերումով յանկարծ հարստանայ, քանի որ նախապէս հարստութիւն տեսած չէ, կը խորհի թէ մեծ մարդ եղաւ, և կը սկի իր հարստութեամբը պարծէնալ։ Մարդուն ալ զինքը կը չփայնեն, իր շուրջը կը դառնան և կը զողին զինքը՝ իրմէ օգուտ մը քաղելու համար։

Զինուար մը երբ պատերազմի զաշտին վրայ հերոսական արարքներ գործէ, ժողովուրդը զովհստաներ կը շուալէ իր անոււան

շուրջ։ Թագաւոր մը երբ մեծ յաղթահակներ շահի, մարդոց պաշտումին առարկայ կը դառնայ, որով թէ ինք կը պարծենայ և թէ ժողովուրդը անոր ձեռք բերած գարու գառաւորուիլ կը ձգտի։ Մարդիկ նոյնպէս կը յարգին մէկը՝ եթէ ան ճարպիկ է, ճարտասան կամ գեղեցիկ, Բանզի աշխարհայի այս բանինքով կը հետաքրքրուի առաջելապէս ու կը պարծենայ այնպիսի բաներով՝ որոնք այսոր քուկդ են և զարդ կրնան չըլլաւ։ Այլ բառերով, մարդերէն շատեր կը զրազին միայն այն արժէքներով՝ որոնք իրենց զգայարանքներուն անմիջական ազգեցութեան տակ կ'իյնան և իրենց այսօրւան առժամեայ կարիքներուն զուհցում տալու խոսուումը ունին։

Բայց մարդ ոչ միայն ֆիզիքական, այլև իմացական, ընկերական, բարյատկան ու հոգեոր էակ մըն է միաժամանակ։ Ֆիզիքական տեսանելի արժէքներէն զատ մարդկային կեանքի մէջ կան նաև իմացական ու բարյական արժէքները, բայց աշխարհ կ'անկիտանայ զանոնք։ Եթէ զրամ ունիս, աշխարհի համար մեծ մարդ ես, հոգ չէ թէ այդ զրամը խարդախ միջնցներով ձեռք բերած ես, ուրիշներուն վնաս պատճառելզի կամ իսկ մարդոց իրաւունքները կողապտելով շահած ես։ Եթէ հարուստ ես, այդ բոլոր յանցանքներդ աշխարհի կողմէն կը ներուին իսկայն։ Որովհետեւ աշխարհ կը հետաքրքրուի ու կը պարծենայ միայն արտաքին երեսով մներացներով, անցաւոր հաճոյքներով ու ժամանակաւոր արժէքներով։

Գաղատիոյ նորագարձ քրիստոնէաները սրտով տակաւին աշխարհէն հրաժարած չէին բալորովին, ուստի կը հետաքրքրուէին շօշափելի ու արտաքին երեսոյթներով։ Քրիստոնէական կրօնի բարյական արժէքներէն աւելի հրեց կրէլց կրօնին տեսանելի ծէս սերով ու արտազութիւններով կը պարծենային Փոխանակ Յիսուսի խաչով կը պարծենական կրօնի տեսակետէն իրենց բարքին է ու հոգեկան։

Գ. — Պօղոս առաքեալի պարձանքը: — Դարձի գալէն առաջ, Պօղոս առաքեալ աշխարհի տեսակէտէ պարծենալիք բազում բանիր ունէր, Բայց երբ քրիստոնեայ գարձաւ, ինչպէս իր Խօղոս անունը Պօղոսի՝ այնպէս ալ իր մոլեւանդ հրէւթիւնը ազատախոն քրիստոնէութեան փոխուցաւ: Դարձի գալէն առաջ իր անձը կամ հրէւթիւնն էր՝ սակայն քրիստոնեայ գառնալէն յիսոյ Յիսուս միայն եղաւ իր կեանքին առանցքը: Անձնակեղրոն Խօղոսը եղաւ Յիսուսակեղրոն Պօղոս: Նոյնպէս իր պարծանքի առարկան ալ փոխուցաւ, և փոխանակ աշխարհի վաղանցուկ արժէքները, իր գերգաստանի փառապանձ անունը, իր բարձր գասախարակութիւնը կամ իր, իրեն Հոռովմի քաղաքացի, ընկերական աշքառու զերքը ըլլալու, եղաւ միայն Քրիստոսի խաչը՝ որ իր գրիսութեան պատճուռ եղած էր: Այդ խաչին վրայ արտայատուած Աստուծոյ անսահման սերը լեցուցած էր իր սիրան ու հոգին: Այս իսկ պատճառու աշխարհ այլևս կորսնցուցած էր իր հրապարքը իրեն համար: Հոռովմի քաղաքացի ըլլալէ աւելի ան ինքզինքը երկինքի քաղաքացի կ'անուանէր, Գամազիէլի աշակերտ նկատելէ աւելի ինքզինքը Յիսուսը հնատնող էր համարէր: Ասչը բաժնած էր աշխարհի սական աւագանքին առաջ առաջ իր անձը, Կետեարար կ'ըստ աշխարհի աշխարհէն և աշխարհը իրմէ:

Յիրաւիր Պօղոս առաքեալ խաչին կը պարտէր իր կեանքին մէջ յառաջ եկած այս փոխուութիւնը: Սերվանդէս կ'ըսէ: Անձգ ճանչնալը հեռու կը պահէ քեզ սնուափ պարծանքներէ, Ա. Պօղոս այլևս կը ճանչնար իր անձը, Կետեարար հրաժարած էր մնութի պարծանքներէ:

Դ. — Կետելի իրական պարձանքը: — Իրական պարծանքը յաւիտենական արժէքները բխու մայուն հանգամանք մը կը կը: Այս աշխարհի պարծանքը ունայն է ու վաղանցուկ, և հետեարար զուրկ մայուն արժէքէ: Ելնէն կ'ըսէ: Ուրեմն ունեամ պարծանքը կը վերցանայ, նոս մարդկային արձանապատութիւնը կը սկսիմ: Որքան ատեն որ մարդիկ ունայն պարծանքը ետեւէն կը վագեն չեն կրնար բարձր արժանապատութեամբ ապրիլ և կեանքի բորձը բարձու ողորաները սաւառնիլ: Մեծն Արտաշէս և Աւելաշը կ'առաջ գալիք:

Եղավ փակից իր աչքերը: Յիրաւիր աշխարհի մեզի տուած փառքը անցաւոր է, քանզի չի կրնար յազեցնել մեր նոզին և գոհացնել մեր սիրտը: Լաւագոյն պարծանքը Յիսուսի խաչով արտայայտուած զոհողութեան մէջէ: Մարդիկ Յիսուսի իրական աշակերտները եղած կ'ըլլան այն տան՝ երբ սպրին այդ զոհողութեան կեանքիքը, հետեւելով Անոր հետքերուն: Ճշմարիտ քրիստոնեաները անոնք են՝ որոնք զիրար կը սիրեն մաքուր սիրով, որով ցոյց կու տան աշխարհի թէ իրենք Քրիստոսի իրական աշակերտներն են և Անոր խաչովը կը պարծենան, և ոչ թէ վաղանցուկ և ունայն արժէքներով:

Անձն որոնք իրենց հարստութեամբը, ընկերային բարձր դիրքովը կամ գաստիարակութեամբը կը պարծենան, տակաւին չեն ըմբռնած անցաւոր ու տեսական արժէքներու միջն եղած տարբերութիւնը: Պազոն կ'ըսէ: ԱՄԵՆՔ շատ կը խորինք այն մարդոց նկատմամբ՝ որոնք իրենց մեծութեան վրայ քիչ կը խօսին: Թիթեսուլիկ ու ծանծաղամիտ մարզիկ ընդհանրապէս իրենց անձին վրայ շատ կը խօսին ու քիչ ուշադրութիւն կը գրաւեն: Մեծ են սակայն այն հոգիները՝ որոնք առհասարակ իրենց անձին մասին շատ քիչ կը խօսին, երբեմն ալ քնաւ չեն խօսիր, բայց միւս կողմէն նոյն համեմատութեամբ մարդոց յարգանքին ու ակնածանքին առարկայ կը զառնան: Լաւաթէր անուն մեծ հեղինակ մը լսած է, ԱՄԵՐ փուռ պարծանքը կը սկսի, Կոն սէրը կը գորդիւ: Այլ խօսքով, բարձրագոյն արժէքներու հանդէպ սերը այն ատեն կը սկսի: Երբ փուռ պարծանքի մարդիկ աշխարհի մատակրան աւագիրի:

Աշխարհը քաշողական զօրութիւն մը ունի, որմէ չհրապուրուելու համար Աստուծուոյ հաւատալ և Յիսուսի խաչին պատուանդին ատքն ծնբազրել պէտք է: Այս կենարար խաչն է որ հաւատացեաներու գրկութիւնը սպահածած է, Աստուծոյ յաւիտենական սերը մեզի յայտնած է և վըբրութեան շիտակ ճամբան աշխարհի մատնածած է: Այսո՛, այս խաչն է որ իրական պարծանքի չափանիչը մեզի ցոյց տուած է: Այն որ այս չափանիչին համեմատ կ'ապրի բնաւ չի զջար:

ԳՐ. Ա. ՍԱՐԱՖԵԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ԷՍԵ ՊՆՅ, ԱԿԱՏ...

Բու՛ ինձ, Ակաս, կը բռչի՞ երբեմն
Սիրող՝ բաղամի մըռայլ ժրխորէն՝
Դեպի լուսագեղ ովկէան մը ծրփոն,
Լազուարք, ջինջ, խորունկ, կուսուրեան հանգոյն.
Ակա՛ս, սիրտ երբեմն կը բռչի՞ հեռուն ...

Ծովն անծայրածիր կը սփոփէ խոնջէննն,
Ո՞ր Դեւն օժտեց ծովն՝ երզուիի խոպոս,
Որուն՝ հովիրու երգը տրմալի՝
Կընկերակցի մերք, օրօն՝ ոգի ...
Ծովն անծայրածիր՝ կը սփոփէ խոնջէննն ...

Տա՛ր զիս, ողքեկառք, առազա ս, տա՛ր զիս,
Հեռուն ... ցեխն այսեղ մեր արտասուլով,
Լացո՞վ է շինուած: Ա՛ն, ճի՞շդ է միթէ
Ար սիրտ երբեմն ևսուր Ակասիս
Հսէ. — Տարէ՛ք զիս, նաև ու ողքեկառք ...

Որան հեռու էք, Եղեմներ բոյրի,
Չեր երկնին տակ միւս ջինչ ու ժպտուն՝
Ներ էր ամէն ինչ, սիրոյ արծանի ...
Ո.նմեղ տարփանելով սիրն էր միւս լեցուն,
Եղեմներ բոյրի, որան էք հեռուն ...

Բայց Եղեմն անծիր՝ մանուկ սէրերուն,
Երգերն ու պըտոյց, համբոյր, ծաղկեփունջ,
Բըլուրին ետեւ՝ զուրակներ թրռուն,
Պուրակներու մէջ զինին փարչերով
Մանուկ սէրերուն դրախտը նոգերով

Ո.նմեղ դրախտը լի խինդով փափկասուն,
Հեռո՞ւն է արդէն Հնդկասանի պէս,
Զինասանի՛ չափ ... արծարեայ ձայնով
Կարելի չէ՞ զայն ե՛ս կանչել կրկին ...
Մանուկ սէրերուն անմեղ դրախտը նին ...:

Թրգմ. Ա. ՍԵՐՈՅ.
(ԳԵՂԱՄ ԱՐՄԱՋԵԱՆ)

ՇԱ.Ռ. ՊՕՏ.ԷՒ

ՊՆՏԱՍՄԱԿԱՋԱԿ

Խելօ՛ք եղիր, ցաւ իմ, ամփոփ ու հանդարտ,
Երիկունը կ'ուզէիր, տե՛ս, կ'իշնէ ցած,
Թանձե ստուեր մը կը պարուէ բաղան արդ,
Ոմանց անդորր տալով, ոմանց նոգ, կասկած ...:

Մահկանացուաց մինչ բազմութիւնն ըստորին,
Խարազանին տակ հանոյին ոնքազործ՝
Խննոյին մէջ կը բաղէ խայթ իր խղճին.
Վի՛շ իմ, տուր ինձ ձեռնդ ու եկո՞ւր, եկո՞ւր հոս ...

Հեռո՞ւ անոնց բովէն, դիտէ՛ վախճանած
Տարիները՝ պատզամին վրայ երկնի՝
Հին զգեստով՝ մութ ջուրերու վրայ հակած

Կարօսազին ...: Լըսէ՛ բալելն ալ ցայզին
Ու ջուրերու խորեն բդիսող Զիդշն ուրախ,
Ու բար տալով խողը մութին՝ կ'իշնեն ցած ...:

Թրգմ. Ա. Սեմս. **ՀԱՌԻ. ՊՈՏԻ.ԷԲԻ**

Ճ-ՊՏՏԵ ԴԱՅԱՆԱՐԻՆ

Օղակին մէջ վիշտերու սուր, մարգերուն զէմ նենգ, զազիր,
Սիրըդ անխոց թէ բազմախոց, երբայր, ժապտիլ միշ զիսցիր.
Ժրափիսն ունի ոյժ մը՝ որմէ մեղի լիւներն կը հալին,
Ու տազնապներ բազմատեսակ նամբեդ ընդհուպ կ'աննետին:

Մ'ըսեր — կեաներ դառն է, ժըլատ, ունի փուշեր արիւնող,
Թէ շրիանձինք պիտի երբէք բարձուններու լուսողող,
Թէ պայֆարիլ զուր է վրսեմ զաղափարի մ'ի խնդիր.
Ժապտէ՛ ու սիրդ պիտի լինայ բարիներով օրինաձիր:

Մի մոռնար թէ դաժան ձմրան կը յաջորդէ գարունն վառ,
Ու զիշերուան աղջամուղջին վերջ կու տայ այզը պայծառ.
Ս. Մայերն վետին կը փարատին երէ ժապտիլ զիտնաս լոկ.
Ի՞նչ տան երէ անցնիս տրում, ուուրփիկ անէծք ու բողօք:

Ժապտէ՛ կեաներին, կեաներ կարն է, մահը մօս է, կը հասնի.
Ժապտէ՛ կեաներին, կեաներ բաղցը է, վայելողին երանի.
Ժապտէ՛ կեաներին բանի ուռ չէ, ժրափիը բաղցը ենզ կ'ընէ.
Ժապտէ՛ կեաներին՝ որ կեաներն ալ նևզ ժըպիտով ողջունէ:

ԳԵՌՈՒԳ. Ա. ՃԻՆԻՎԻԶԵՍՆ

ԲԱՆԱՍԻՐԾԿԱՆ

ՆԱՐԵԿԱՑԻՆ

ՏԻ

ՀԵՏԱԳԱՅ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Նարեկացու նկատմամբ միանգամայն իրաւացի էին իրենց վերաբերմունքով և գնահատականով մեր այն բանաստեղծները, որոնք բուռն ճգում էին հանդէս բերում հասնելու ստեղծագործութեան մարդկային խորութեան, ծեր կատարելութեան, ստանաւորի պոէտիկական հնարանքների բազմացման իրանքան, երաժշտականութեան և լիզուի հարստութեան, ինչպէս, օրինակ՝ թուանինը, իսահակեանը, Տէրեանը, Մէծարենցը, Վարուժանը և ուրիշներ։ Նրանք վերին աստիճանի բարձր ճաշակով բանաստեղծներ էին, որոնք իւրացրել էին մարդկութեան ստեղծած պոէզիայի կուլտուրի գրական կողմերը։ Թւում է, թէ համաշխարհային բանաստեղծական արուեստի ստեղծած նորութիւններին և բոլոր նրութիւններին հրաշալի տեղեակ այգօրինակ գրական խոչոր գէմքերը չպէտք է հետաքրքրուեին իր ամրող կենքը գիւղում անցկացրած Փ. Գարի մի բանաստեղծում, թւում է, թէ նարեկացին նրանց համար պէտք է արդէն մի հնացած գրող համարուեր, բայց այդպէս չէ։

Այն ժամանակ, երբ շատերը հիսանում էին Վելունով՝ իրեն թէ մի անշանաւոր նովատորուց, մեր բանաստեղծների աչքի առաջ բարձրանում է իր ամրող հասակով նարեկացու վիթխարի կերպարը։ Մեր առաջաւոր բանաստեղծները չեին կարող չնատել, որ այն ժամ գովարանուած վիուենների պոէզիայի աշխատը բերած օնորութիւնները (յատկապէս ստանաւորի երաժշտականութիւնը) շատ գարեր առաջ արդէն յայտնագործել էր Գրիգոր Նարեկացին և ոչ միայն յայտնագործել, այլև ստեղծել էր բավանդագութեամբ հարուստ և առողջ (և ոչ նրանց նման կիւնանդպին) մի շարք կատակ բանաստեղծական նմուշներ, նարեկացու արժանիքները այսպէս մի-

ջազգային գրականութեան ֆոնի վրայ աւելի լաւ նանաչուելուց յետոյ, մեր բանաստեղծները սկսում են եռանդագին ուսումնասիրել նրան ու սովորել նրանից։ Միսաք Մէծարենցի մասին կենսագիրները պատմում են, որ նա Մատեանը միշտ բարձի տակ էր պահում, իսկ Տէրեանին պատկանող գրքերից մացել է մի նարեկ, որի լուսանցքներին բանաստեղծը բազմաթիւ դիտողութիւններ է գրել (*). Մէծարենցի ու Տէրեանի նման, զարասկզիրի մեր միւս խոչոր բանաստեղծները նոյնպէս շատ են սիրել նարեկացուն և ուսումնասիրել նրան։ Վերեւում յիշատակուած մեր նշանաւոր բանաստեղծների ստեղծագործութիւնների օրինակով տեսնենք, թէ ի՞նչ բնոյթի գրական կատար են գոյութիւն ունեցել այդ բանաստեղծների և նարեկացու միջեւ։

Նարեկացու հետ ստեղծագործութեան որոշ կողմերով կապուածութեան մասին ամենաշօշաբեկի և առաջին հայեացքից խիկ նկատելի փաստեր է տալիս Միսաք Մէծարենցը ոչ միայն իր բանաստեղծութիւններով, այլև իր մի շարք պոլեմիկական փայտական բառուն արուեստով գրուած յօրուածներով։

Երբ լոյս է տանում Մէծարենցի ա՛ջիածնա գերնացքով բանաստեղծութիւնների ժողովածուն, քննադատութեան մէջ զբանը ընթառում են մարգիկ, որոնք խիստ յարձակումներ են գործում բանաստեղծի վրայ, նրան անուանելով ածիծազելի կապկոզ, այժմիքն գտնելով՝ որ նա իր թէ ազգային բանաստեղծ է, ինքնուրոյն չէ։ Նրանք Մէծարենցին համարում են ֆրանսիական սիմվոլիսմներին հետեւող և կրկնող Ակրսում է մի սուր բանակիւ։ Մէծարենցը իր յօրուածներու հմտորէն ետ է մզում այդ յարձակումները և ցոյց է տալիս իրին քննադատութիւնների ոգիտութիւններ պոէտիկական իւրացանակութիւնները ճանաչելու հարցում, և այսուհետեւ մեզ համար հետաքրքրական այն է, որ իր տեսակետները կիմնաւորելու համար նա անընդհանա վկայակուում է Գրիգոր Նարեկացուն։ Ահա մի հասուած նրա՝ իր հակուակորդ ենովք Արմէնի

(*) Այդ մասին մեզ յայտնել է Պրոփ. Գ. Կոստիկեանը, որի մօտ գտնւում է Աղջքերգութեան Մատեանի նշուած օրինակը։

զէմ գրած ո՞ննագատութիւնըն վերնագրով
յօդուածից:

«Տակաւին պահեստի գիտողութիւն մըն
ալ ունի Ենովք Արմէն. և Արեին բանաս-
տեղ ձութեան մէջ սա երկտողը կայ.

Թող հագուսյ մէջն անցնին կարգաւ
Մանուկենք բնդարմացած.

Այս տողերն ալ հպելով իր խարտոցին,
Ենովք Արմէն պիտի գոչէր. «Ե՞նչ, Հոգիին
մէջ մանուկ կրնա՞յ ըլլալ։ Որովհետեւ՝
նովք Արմէնի միտքը ընդհանրապէս գրա-
կանութեան, ու մասնաւորապէս բանաս-
տեղ ձութեան անընդունակ միտք մըն է.
ու չի կրնար իմաստի պատիկ կրճատումները
լայնել ու հասկանալ անմիջապէս, թէ, ո-
րինակի համար մանուկը տմփով փոխարե-
րութիւնն է հոս մանուկ զգացումներուն,
տեհնէրուն, յոշերուն, բաղանքներուն
որոնք երկար տաեն ընդարձացած՝ արեին
կենսարաշխ ճառագայթներուն պէտք ունին
վերաթափուելու համար։ Խնչ դժբախտու-
թիւն պիտի ըլլար, եթէ բոլոր հասկացողու-
թիւնները Ենովք Արմէնի պէս անձկանային.
այն ատեն հարկ պիտի ըլլար մեր գրական
հսկային՝ Նարեկացիին (ընդգծումը մերն է — Մ. Մ.) փոխարերութիւններուն ալ
զատավճիռը կարգալ («Յուրզառ կինաց»,
«Մանգաղ կամաց», «Անկողին կամաց»):

«Ենովք Արմէն կ'ուզէ անպատճառ իմեր
մտակոյր ու պանդոյր տարփող մը գանել
իմ մէջս, մանաւանդ բառամոլ խորհրդա-
նշական մը, ծիծալիլ կապկոյ մը։ Եւ ո-
րովհետեւ սկիզբէն ի վեր գրիթէ բնազգա-
րար, և հիմակ բացորչակի, իմ գրական
մեծազոյն մտահոգութիւնն եղած է զպրոցի
անհան պիտակումներուն յիմարական հե-
տավարող մը չըլլալ և խուսափել արտա-
քին ազդեցութեանց նուաստացուցիչ դրոշ-
մէն, մէկ խօսքով կարելի եղածին չափ
իմզինես ըլլալ՝ ուժգնորէն կ'ընդգվիմ Ե-
նովք Արմէնի այդ անմտած վերագրութեան
դէմ։ Ու բարբառուն ապացոյց մը տալու
համար քէ սինպոլիսը կրնայ ստացական
չըլլալ՝ դարձեալ մէջ կը բերեմ պանձարի
Նարեկացիին օրինակը» (*): (Ընդգծումը
մերն է — Մ. Մ.):

(*) Մ. Մեծարենց, Գերթուածներ, Երևան,
1934, էջ 249։

Այս հատուածից երեսում է, որ Մեծա-
րենցը բանաստեղծաթիւն մէջ լայն չափե-
րով կիրառելով վոլխաբերութիւնը, զա հա-
մարում է ոչ թէ սիմվոլիստաներից ծագած
մի մերժելի նորութիւն, այլ ընդհանրապէս
ֆնարիքութիւն համար անհրաժեշտ մի
քան, որ սիմվոլիստաներից շատ տաաջ գոր-
ծածել է մեր գրական հական՝ Նարեկացին։
Այսպիսով, Մեծարենցը փաստորէն խոսառ-
վանում է, որ ստեղծագործելիս աչքի
տուաջ է ունեցել Նարեկացուն և սովորել
է նրանից։ Այսուհետեւ այս նոյն եղակա-
ցութիւնը կարելի է բիսեցնել նաև այս րա-
նից, որ երբ նա ժիմանկով իր մատ սիմվո-
լիկ պատկերների գործածութիւնը ստացա-
կան արտաքին ազդեցութիւնների արգիւնք
մինչը, այս համարում է ինքնուրսյն և
բնականաբար առաջացած, իրեն նման ե-
րկոյթի հնարաւորութեան օրինակ՝ նորից
մատնացոյց է անում Նարեկացու ստեղծա-
գործութիւնը։

Ի հարկէ, միայն փոխարերութիւնների
և սիմվոլիկ պատկերների գործածութեամբ
չի սպառուում Նարեկացու պոտեհկական
կուլտուրայից Մեծարենցը ուսումնառու-
թիւնը. կան և աւելի կարեոր հանգամանք-
ներ, որոնք վերաբերում են նաև բա-
նաստեղծութիւնների բովանդակութեանը։
Դրանցից մէկը մարդուն բնութիւն հատ
անմիջական հազորդակցութեամբ ներկա-
ցացին է, մարդկային կզացմունքները
բնութեան պատկերների հետ զուգորդելին։
Այս զուգորդումը ինքը Մեծարենցը յօպ-
ուածներից մէկում համարում է բանաս-
տեղծական կատարելութեան հանիելու
ձգտման արտայայտութիւն և յայտաբառում
է, որ ինքը ամէն կերպ ջանք է գործազրել
ոչ թէ իսկել մարդկանց և իրերի յարաբե-
րութիւնները, այլ ամրապնդել զրանք։

Եւ իրօք, երբ Մեծարենցը սինքնազա-
տութեան փորձ մը յօպուածում վերլուծ-
ման է հնթարկում իր սեփական ստեղծա-
գործութիւնները («Միածան» վերնագրով
բանաստեղծութիւնների տուաջին ժողովա-
ծուն), սքանչելի կերպով բացայալում է
պոէտիկական իր այդ տասութիւնն գործնա-
կան իրականացումը։ Եւ սրովհետեւ այդ
տասութեան պատմական հիմնարման հա-
մար Մեծարենցը դարձեալ հնարաւոր էր

որ Նարեկացու օրինակին դիմեր, ուստի զարմանալի չէ, որ երբ նա իր տաղերն է վերլուծում, երբեմն թւում է, թէ Մատուեանի մոտիվների մասին է խօսում: Նմուշի համար Մեծարենցի նշուած յօդուածից մէջ բերենք մի քանի հաստուածներ. «Գիշերերգութիւնները, լուսաւէտ կամ մթասուուեր, երկար տողանցք մը կը գծին ամբողջ հատորին մէջ, Գիշերը երկար ատեն իր ազգեցութեան, իր ինանդաղատանքին մէջ պահած է բանսաստեղծը»:

Ակիզբները բաղր ու զուարը և անոր գրանքը.

Գիշերն անու է, զիշերն հետաղին

Գիշերին մէջ չէ՞ ապաքէն, որ երազները աւելի վառ ու արագ վերթեառներ կ'ունեան. գիշերին մէջ, ուր ըրջանկարը այնքան հմայիչ կ'ըլլայ, և սպասում՝ այնքան քաղցրօքէն՝ տաժանազին.

Մուր սենեակիս մէջ կը տրջիմ առջի համբորն անցելին

Ու օրունեներս են բոցալառ՝ ջերմութենեն երազային,

Փակ են աշերս, եւ կամ յանկարձ մերը անհամեթե գուրս կը նային,

Ահ, լուրիւն որ կը տեւէ, եւ սուսերնեն՝ որ կը բալին ...

Բայց գիտեռուսն սերը միւս կը վերածալիքի ...

Ու այդ սէրը կ'երկարագուի մինչև պաշտամունք. և այդ պաշտամունքը այնքան խանգուտ է, որ բանսաստեղծը կ'ուգէ նոյնիսկ գիշերին յաւիտենութիւնը, բացարձակ անկապտելի աստուածութիւնը.

Կ'ուղեմ որ դադրին ճայներն այս պատիք, ու նեկաւիդ զողի ըմպեմ եւ անյազ. Կ'ուղեմ որ դադրին տիւ եւ ժամանակ ու դարիւներուկ իյնան ծնրադիք:

Եհուոյ երկիւզած աղերսանք մըն ալ.

Ցնորաբեր գիտեր, ան, ընդունե զիս.

Ցիդունէ, միստիկ ով անդուրութիւն ...

Բայց վերջապէս կու գայ ատեն մը՝ որ գիշերներու այս տարփանքը ժամանակ մը տեղ կու տայ արեին ու տիւին հրայրքին,

Պիտի բմպեմ բոցի արեւին, նառ պայքի եւ ծարաւի ... :

Ամբողջ հատորը գրեթէ սպասման երկարաձիք գիշերի մըն է, աղերսանքներով, հոգսերով, ցաւերով ու երբեմն ալ կայծակլտուն յոյսերով լեցուն ... »(*):

Այս բոլորը ցոյց են տալիս նաև, որ Մեծարենցը իր սեփական ժողովածուով սուլթանական մզաւանջային իրականութեանը հակագրուելով, ասրեի տիւը ու հրայրքը երազելով հանգերձ, որոշ չափով արտայայտել է նաև միստիկական տրամադրութիւններ, որնք, ի հարկէ, բացանական երեսոյթ են. Այլ բան է, երբ Մեծարենցը օգտագործում է Նարեկացու պուտիկական կուլտուրան:

Մահուանից երեք ամիս առաջ զրած իր «Եհուամաց Բարեկինդան» վերնագրով յօդուածում Մեծարենցը պատասխանիրով իր նողկալի հակառակորդներից մէկին (Փալլակին), գրում է նաև հնուեալը. «Դիտելի է, որ Փալլակի իրք անճաշակ դատապարտած բասերը՝ առաւելապէս նախինթաց մատինագրութեան մէջ գործածուածներն են ... ինչո՞ւ չիսոստվանիլ թէ տղեկութիւնն այդ բառերը ծամածուող ըլթուունքին, և անոնց ուժեղ մերձեցումին տոկալու անկարող՝ իգացեալ, ուժասպառ լսելիք մէջ է. այդ բառերը գործածող նախին մատինագրերը մենէ շատ աւելի լայն կ'ըմբռնէին լսելութեան և առողանութեան գեղեցիկը, — գիտէին վեհաշուրթ արտասանել բառերը, ու լսել անոնց վեհանդուր ձայնը. իսկ ի՞նչ զիտեն Փալլակիները. ոչինչ, ո՞չ իսկ իրենց տգիտութիւնը, նախին մատինագրերը գիտէր ծովածայն հնչեցնել բառերը. —

«Զիա՞րդ բաւեսց դոյզն ինչ աղջամուղ՝ մեծիդ նառազայրից, զիա՞րդ նամբարձցի կօւսնցի ընդ խոչի բայց՝ խակուրքին նետութեան մարմնոյս կիւրութեան

— Ընկալ բայցըրեամբ, Տեր Ասուած նզօր, զգանեացոյիս զալաչան ... :

Գիտէր ծիծաղախտ ժպտեցնե՞լ բառերը. —

«Ելիքն ծով ի ծով ծիծաղախտ ժաւալանայր ... »

Եթէ գիտնար Փալլակ Նարեկացիին այս

(*) Մ. Մեծարենց, Երկերի Լիակատար ժողովածու, Երևան, 1934, էջ 243:

նմանաձայնութիւնը, գուցեւ չծաղրէր իմինս՝ որ չքնազ բան մ'ըլլալու յաւակնութիւնը չունի, բայց ունի անճաշակ որակութիւն զէմ բողոքելու արժանապատռութիւնը. —

Արև ծիծառզօի, ձևազօրկ ծամերում(1):

Մեծարենցը ոտանաւորը երաժշտական դարձնելու համար լայնօրէն կիրառում է բաղաձայնոյթները: Իր շրջանի մեր բանատեղծներից նա, Տէրեանի հետ մրասին, առաջինն է ոտանաւորի այդ կողմի վրայ մեծ ուշագրութիւն գարձնում: Ինչպէս փաստերը ցոյց են տալիս, նա, չնայած ինքնատիպ լինելու իր ամրոզգ ձգտման, այնուամենայնիւ չի ցանկացի հրաժարուել նարեկացու յայտնագործութիւններից և իր խոկ խոստովանութեամբ օգտագործել է դրանք: Այսպէս, նրա բանատեղծութիւններում առատօրէն հանդիպում են նարեկացիական ս, ո, է, ծ բաղաձայններով առաջարած բաղաձայնոյթները. ահա ոռզ կազմուած բաղաձայնոյթի մի քանի նմուշ.

Գիշերն սննուե է, գիշերն նեւըափին հաշիով օծուն ու բալասանով(2):

Կարնածայիկ ու կապերակ զիշերին մեջ, Սեղեսիկի փոքի մըուն ըլլալ բափիւն ... (3):

Նոյն և ծով կազմուած.

Նոգուսո դափ ու բմբուկի
Կիզնէ ծիծալիս այս զիշեր,
Ծնձլաներու պէս ցնուն՝
Մափ կը զարենն իմ յուշեր(4):

Կապոյս ծովից, ծիծան, ծփուն ձայներ, միսիրկ վարգ(5):

Բայց պէտք է նկատել, որ Մեծարենցը մեր այն բանաստեղծներից է, որ ամենից աւելի շատ բան է աւելացրել հնուց արգէն յայտնի և գործածական բաղաձայնոյթների վրայ: Այսպէս նրա մօտ յաճախ են հանդիպում նաև լով, զով, ձով, ձով և յատկապէս նով կառուցուած բաղաձայնոյթներ: Վերջինի վրայ Մեծարենցը մի առանձին ուշագրութիւն է գարձնում՝ ստացուազ երա-

ժըշտական տպաւորութիւնը շատ բարձր գնահատելով:

Նաւակներ մեկնեցոն ամենն ալ, բաղաձանեն ակաղնուն ...

Սակայն չի կարելի, իսկապէս, չխռոս տովանել, որ այս նով բաղաձայնոյթները իրենց կլասիկ կիրառումն են գտել Տէրեանի բանաստեղծութիւնների մէջ: Տէրեանը ներով բաղաձայնոյթը առանձնապէս նկատելի է գարձնում զուգորդելով մ բաղաձայնի հետ և վարպետորէն այնպէս դասաւորելով, որ այդ բաղաձայնները ընկնեն ուռւ կամ ուս ձայնաւորներից յետոյ՝ բառացիքը ջետում. օրինակ՝

Ձեռներում ձեր մսերիկ նուազուն,
Ձեր ձայնում, երբ տասմ եք «Տէրեան»...
Նայիրենսն ե երգում ննօրեան ... (6)

Պիտի նշել, որ Տէրեանը առհասարակ աւելի իր պուտիկական կուլտուրայով է կապուած նարեկացու հետ. յիշենք նրա նշանաւոր անշուկ ու նըշիւն բանաստեղծութիւնը, որ ներով ստեղծուած նմանաձայնութեան կիրառման մի սքանչելի նմուշ է հանդիպանում:

Ինչպէս Մեծարենցը, այնպէս էլ ի. զարք սկզբների մեր միւս բանաստեղծների սէրը գէպի նարեկացին և կապերը նրա հետ արգիւնք չեն միայն պուտիկական կուլտուրայու բնագաւառում նրանց զիտակցուած ուռումնաւութիւն բնական անհրաժշտութեան: Յատկապէս այդ շրջանի մեր բանաստեղծների համար նարեկացին նարազատ մի գրող էր գտրձել նաև շնորհիւ իր ստեղծագործութիւնն ըովանդակութեան մի շարք դրական գծերի:

Ամբողջ խնդիրն այն է, որ այդ ժամանակաշրջանի մեր առաջաւոր լաւագոյն բանաստեղծները չէին կարող սառը և անտարբեր գիտել այս բանը, թէ ինչպէս է տնտեսապէս ու հոգեպէս ճնշւում ժողովուրդը սուլթանական բարբարոսական կարգերի և ցարական ու ակացիայի ու բուրժուական կեղեցման պայմաններում, և թէ առհասարակ, զնալով ինչպիսի ծանր գրու-

(1) Նոյն, էջ 277-278: (2) Նոյն, էջ 7:

(3) Նոյն, էջ 75: (4) Նոյն, էջ 8:

(5) Նոյն, էջ 23:

(6) Վ. Տէրեան, Բանաստեղծութիւններ, Երևան, 1940, էջ 264:

թեան մէջ է ընկնում աշխատաւորութիւնը: Նրանք տեսնում էին, թէ ինչպէս մարդիկ այդ պայմաններում ընկնում էին և մարդու կերպից և դառնում ասրիմ չար դժիսին (Թումաննեանի խօսքերն են), թէ ինչպէս մարդը փոքրանում է զառնում է զգացմունքներով սահմանափակ, թէ ինչպէս բռնութիւնը խեղում է և վայր հակում մարդկային հոգու ազատ թունչքը: Այս բոլորը զգալի էին մահաւոնդ սուլթանական տիրապետութեան սահմաններում ապրող արևմտահայ բանաստեղծների համար, որոնց գլխին կախուած էր միշտ նաև ֆրազիական գոյութեան անապահովութեան սուրբ:

Այսպիսի պարագաներում մեր նոր պուէզիաֆի հիմնական թեմաներից մէկն է զառնում (դեռ նոյնիսկ Դուրեհանից սկսած) մարդու մէջ մարդկայինի զարգացման հարցը: Դուրեհանը, որը մեծ համարձակութեամբ ատտերի սունելի սանդուղքը բարձրանալով՝ Աստծոն կեանքի ամենագնառական պահանջ է ներկայացնում («Տրտունչքը»), իր ստեղծագործութեան մէջ շարունակ զանգաւում էր մարդկանց՝ իր նկատմամբ ունեցած ոչ մարդկային փերարերմունքից:

Մեր բանաստեղծներից շատերը հանդէս են գալիք որպէս աշխատաւոր մարդու լուսապայի համար պայքարողներ, մի ապազայի, երբ պէտք է նաեւ մարդու մէջ զարգանաւ ու յալրէն մարդկայինը: Իսկ յայսնի է, որ Նարեկացու ողբերգութեան էական գծերից մէկն էր ծգուումը՝ մարդուն իր հոգեկան աշխարհով բարձրացնել այնպիսի սահմաններ, որտեղ նա պիտի հաւասարուէր կատարելութեան գաղափարապատկեր հանդիսացող Աստծու հետ: Ուրեմն բացառած չէր այն հանգամանքը, որ այդ ըըրջանի մեր բանաստեղծներին նետաքրքրէր նաև Նարեկացու ստեղծագործութեան բովանդակութեան որոշ կողմիրը:

Մեր գեղոկրատ բանաստեղծները բարձրանալու մզձաւանջային իրականութիւնից և իրենց ըրջապատող՝ շատ ճշճիմ անձնաւորութիւններից, երազում էին մարդու համար երջանիկը, լաւը, երազում ու ներկայացնում էին ազնիւ ու մահու մարդուն, որը նեղ անձնական չէ, սահմանափակ չէ և ապրում է աշխատաւորութեան կեանքով,

հասարակական մեծ կեանքով: Հասկանալի է, որ բանաստեղծների այսպիսի պատկերացութերը չէին կարող երթեմն չշփուել Նարեկացու ամատեան Ողբերգութեան պոէմում ստեղծուած լիրիկական հերոսի մարդկայնորէն խոր ու պայծառ կերպարի հետ:

Արևմտահայ բանաստեղծներից Նարեկացու ստեղծագործութեան բարդիցիաները նկատիի չափերով օգտագործել են նաև Վարուժանու Սիամանթօն:

Դանիէլ Վարուժանը ունի մի քանի այնպիսի բանաստեղծութիւններ, որոնք պոէտիկական շատ կողմերով լիշեցնում են Նարեկը (իշենք գրանցից սնանապարհ Խաչի գերագույք՝ աղօթքը ձևով ու սնով գրուած բանաստեղծութիւնը), այլ գործերում պատահում են և ուղղակի Նարեկացիական արտայայտութիւններ, ինչպէս՝

... Միսիս նեններն, արփա բուրգան հունեան ...⁽¹⁾

Բայց աւելի հետաքրքրականն այն է, որ Վարուժանի բանաստեղծութիւնները մէջ կան այնպիսիները, որոնք իրենց մատիվներով, իրենց բովանդակութեամբ ևս լիշեցնում են Ողբերգութեան Մատեանոց: Վարուժանը մարդկային բնաւորութեան մաքրութեան ու մեծութեան որոնողներից ու ձգտողներից էր, ուստի նա երգել է լոյսը, որպէս այդ բուրորի այլարանական խտացումը.

Կ'երբամ աղբիւը լոյսին ...
Աւզին եւկար է, սպարկուած է ուղին Կայձարերով, ցանկուած՝ մորտի փուտերով. Ուղին տեղ է նառապայրի մնանգութեակ: Անկ կ'ելլեմ! յենով գողիոց ծունգերուս, ծե ծունգերիս, զոր զամեցին եղբայնեւս, Արիւնս ասք կը բոյսի:

Նենն է կուրծիս, բարիշներու վեալ՝ փա-

թին:

Ան է կ'երբամ գեափի աղբիւը լոյսին ...⁽²⁾

Բանաստեղծը ծանր տանջալից ուղիւ պէտք է անցնի լոյսի ազրիւրին հասնելու համար, որպէսզի լոյսով լեցնի սրտի դա-

(1) Դ. Վարուժան, Հեթանոս Երգեր, հ. Պուիս, 1912, էջ 206:

(2) Նոյն, էջ 173:

տարկ սափորը, որովհետեւ լոյսն իր սմաքի հարսն էս և տափագրքի բերկութեան զիհնին։ Արգեօք այս գեղցիկ բանաստեղծութիւնը իր որոշ կողմերով նարեկի մի մանրանկարը չի յիշեցնում . . .

Ինչ զերաբերում է Սիամանթօյին, ապա պէտք է ասել, որ նո, ինչպէս նարեկացին, գրել է գերազանցապէս խառը ոտանաւորներով։ Յետոյ նա մեր յայտնի բանաստեղծներից ամենից աւելի հակուած լինելով դէպի սիմվոլիզմը, ամենից աւելի շատ է գործածել փոխաբերութիւններ և այլարանութիւններ։

Նարեկացու պոտիկական արուեստի ոգին Սիամանթօյի մօտ առաւելապէս երեւան է գալիս փոխարերական պատկերների կերտման ընթացքում։ Յաճախ պատահում են այնպիսի փոխարերութիւններ, որոնք, թուում է թէ, ստեղծուած են նարեկացու փոխարերութիւնների անալոգիայով։ օրինակ՝ նարեկի «Մի տասցես ինձ ստիճն աշաց ցամաքեալ» արտայայտութեան ոռով Սիամանթօն ունի այսպիսի արտայայտութիւններ. . . Յոյսին ստիճնքները յափրացումն էին չըթանքներուն . . . կամ. . . Մի մոռանար, անոր աչուցներն ու բերանը . . . ընդգումի ստիճնքներուն կարկառելուն։

Բայց պէտք է մի բան անպայման նկատել. թէպէտ առաջին հայեացքից թուում է, թէ Սիամանթօն շատ է նմանւում նարեկացուն, սակայն դա այնքան էլ ճիշգ չէ։ Սիամանթօյի պատկերաւորման արուեստի մէջ կայ որոշ հիւանդագին տարրը, որը միանգամայն խորթ է նարեկացուն։ Այդ տարրը պատկերների մզձաւանջային խիտ գոյներն են, որոնցով բանաստեղծը ցանկանում է քստմեցնելով ապրումներ առաջացնել ընթերցողի մէջ. օրինակ՝

Նրէ կրնաս, աննօննօրէն յեսիք դարձիր
Ու տես մեռելներուն հողին ժայրեւուն
յանկարծական։

Կամ.

Օ, օգնութեան եկեմ, զլիսառաւած մարմիններ գեզի զիս կ'արօաւեն։

Գրական հետաքրքիր երեսոյթ է Սիամանթօյի «Սուրբ Սեսրոպ» լիրիկական պոէմը. բանաստեղծը իր այս գործը աշխատել է սճաւորել միջնադարեան պոէմ-

ների և հկեղեցական բանաստեղծութիւնների տիպով, և ինչ ասել կ'ուզէ, որ առաջին հերթին նա աչքի առաջ է ունեցել նարեկը։ Այս բանը առանձնապէս երկում է պոէմի ներբողական մասերից և Մեսրոպի աղօթքից, որից մի կտոր մէջ բերենք։

Օգնե ինձի, Տարբերու հայր,
Նս աչք ալօս եւ տեսողութիւն անբախանց,
Անայնամիտ ունկնդիր եւ շարալուր ականչ,
Աններդանակ երածիւօս եւ մեղաձայն եր-
գի . . .

Նս անհողագործ դաշտորա, տեմարան բա-
վուր,
Մեղանասպաս անհաց եւ ցամաքեալ զինե-
բաւու,
Նս՝ անկոչ երաւիրեալ թիսուսական հար-
սանիքին,
Նս անձեր լուսարա եւ անմատեան մատող...
Քու փրկութեան փարոսներդի կարիլ մը լոյս
տուր ինձի.
Եւ երկնային դուռներուդ հետ հոգեկան
Կեանիքն դուները դրախտին պէս րոդ բաց-
ուին . . . (1)

Միայն այս փոքր հատուածը արդէն ցոյց է տալիս, որ Սիամանթօն ոչ միայն նարեկի ոռն է օգտագործել իր պոէմը գրելիս, այլև ուղղակի այնտեղ գործածուած արտայայտութիւններից շատերը։ Սիամանթօյի այս պոէմի մասին իր ժամանակին Վարուժանը գրել է. «Սիամանթօ իր այս քերթուածին մէջ տուալ իրեն համար նոր ձև մը քերթելու, որ իր միւս երկերուն մէջ հազիւ կ'ուրուագծուէր. այս՝ զինքը նարեկացին հետ կապող թելն էր՝ զոր ամրակուռ չզթայիլ մը վերածեց» (2)։

Մ. ՄԿՐԵԱՆ

(Մնացեալը յաջորդին՝ 18)

(1) Սիամանթօ, Սուրբ Մեսրոպ, Թիֆլիս, 1913,
էջ 15 - 16.

(2) Դանիէլ Վարուժան, Երկեր, Երևան, 1946,
էջ 373։

**ՍՏԵՓԱՆՈՍ ՎՐԴ. ԼԵՂԱՑԻՈՅ
ՏԱՐԱՆԱԳԻՐԸ**

«Հանդէս Ամսօրեալոյի 1912 տարւոյ համարներուն մէջ հանդիպեցայ Ստեփանոս վրդ. Լեհացւոյ տապանագրին, առառուած Շահնախթանեանի լնդօրինակութենէն (Ստարգրութիւն էջմիածնի, Ա., 272), համեմատելի Ալիլանի հրատարակածին հետ (Ալյարատ, էջ 241):

Հ. Ա. Ակրնեան տապանագրին եօթներդ տպորդ մէջ տպուած Կ թուագրիր անհնալորին գանիւով կը սրբագրէ զայն և կը կարդայ ՚, ինչ որ ուղիւ կը համապատասխանէ հրն յիշատակագրի մը կողմէ Ստեփանոս վրդ. ի մահուան համար նշանակուած ԽՃԱԾ թուականին (Հանդ. Ամս., 1912, էջ 64):

Կ. Յ. Բասմաջեան, ի Ս. էջմիածին իր առաջին գիտական ուղկորութեան միջոցին, անձամբ նորէն լնդօրինակած է Լեհացւոյ տապանագրիը՝ որ քանի մը տեղ կը տարբերի Շահնախթունեանի օրինակութենէն, Բասմաջեան ալ ինդրոյ տարկայ թուագրիր կը կարդայ Կ (Հանդ. Ամս., 1912, էջ 424):

Մենք աչքի առջն ունենալով յիշեալ երկու լնդօրինակութիւնները, կ'առաջարկնենք վերականգնել այդ տապանագրին բնագրիը այսպէս:

Յալլամ զբի անիւս եղեալ պահի Մարմին մահուր վարդապետի Աստուածաբան Ստեփանոսի Որ եր տեղեալ բնիկ Լեհացի Անիւն ի գուրս այս ընկրկի Հազար հարիւր լնդ երեսնի Կրկին բարիւր բիւ հայկազնի Որք հանդիպի ուրի զողորդի Աստուած եւ ծեղակած ուղրեալ պահին:

Մեր առաջարկած ուղղութեալն են հետեւալները.

ա. տող

Յարկ	եղեալ պահի (Շահնախ.)
Յարկ	(յայս)	"	" (Ալիլան)
Յարկ	[իս յայսալիկ]	"	" (Ակրնեան)
Յալլամ	կրիս նուս	"	" (Բասմաջ.)

Նկատելով որ Բասմաջեանի ընթերցումը բոլորովին անիմաստ է, և նախորդներն ալ այդ անիմաստ թուող զրերը դուրս թողած են սրեւ պատճառով, մենք կը փորձենք այդ զրերուն գոյութիւնը արդարացնել և կարգալ:

Յալլամ զբի անիւս եղեալ պահի

Կամեմատէ Ե. տողի անիւս ի գուրս բացատրութիւնը, որ իր կարգին առնուած է Ժողովովի գրքէն — ԺԲ. 6 — «Մինչեւ իցէ . . . ընկրկեալ անիւս ի գուրն»: Տապանագրին մէջ սպրդած այս սխալը թերեւ վերագրելի է փորագրիչին:

է. տող

Կրկին բառիւ	Կ իւ	հայկազնի (Շահնախ.)
"	Դ Դ	" (Ալիլան)
"	՚Ի ՚Ի	" (Ակրնեան)
"	Կ Կ	" (Բասմաջեան)

Կրկին բառիւդ բիւ հայկազնի

պէտք է կարդալ: Երկրորդ բառին առաջին գիրը — ՚Ի — կարդացուած է Բ, թերեւ փորագրիչին կողմէ: Ակրնեանի սրբագրութեամբ Կի տեղ ՚Ի կը կարդանք բայց կցելով նախորդ բառին և կ'ունենանք Լեհացւոյ մահուր հայկական տարեթիւը՝ այսպէս. $1130 + 2 \times 4 = 1138 =$ ԽՃԱԾ:

Ն. ԵՊՍ. ԾՈՎԱԿԱՆ



ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ “ՀԱՒԱՏԱՐՄԱՆ”^С

Երջանկայիշատակ Կարապետ Եպիսկոպոս «Կնիք Հաւատոյ» զրքին սկիզբը զետեղած իր հմտալից ներածութեան վերջին էջերուն մէջ (CX-CXIX) զբաղած է Վարդան Վարդապետի մը կողմէ կազմուած ռՀաւատարմատային հեղինակին ինքնութեան նշգումին հարցով։ Ան իր աճած ունեցած է Ա. Էջմիածնի Մատենագրաբանին Հ. 565 = 512 ձեռագիրը, գրուած ՈՒԾ. = 1209 թուին։ Բայ Կարապետ Եպիսկոպոսի քննարկման, յիշեալ Հաւատաքածոն երկասիրողը կրնայ ըլլալ Հաղպատացի Վարդան Վարդապետը, որ «Ծնորհալու ժամանակ կիրիկիայում գեղերելուց և Հաղպատ վերադառնալուց յետոյ մինչև 1210-15 թուականներն էլ ապրած Կարող է լինել (էջ CXVI):

Այդ հարցի լուսաբանման կարենոր նպաստ մը կը բերէ մեր Ձեռագրատան Թ. 2331 գրչագիրը, որ «Վարդան Գիրք» կոչուած ժողովածուն մըն է, բազկացած երկու ուրոյն մասերէ, գրուած ընտիր բոլորգով, հին բամպակեայ, փափուկ թուղթի վրայ, Այս յօդուածին համար մեկ հետաքրքրոց ձեռագրին երկրորդ մասն է, էջ 261-532, պրակ Ա.-ԺԲ, որուն վերջին (508-529) էջերը կը պարունակեն Հայոց Հայրապետաց համաօսա գաւազանապիրք մը, Ա. Գրիգոր Լուսաւորչէն մինչև Տէր Ստեփանոս, որ թուականութեան ԶԼԹ. = 1290, որ իր գահակալութեան ներբորդ տարին գերի կը տարուի։ Հստ այս ձեռագրին զրչութեան ժամանակը կրնայ զրուէլ ԺԳ. դարս վերջը։

Գալով բուն խնդրոյ առարկայ գրուածքին, որ Վարդան Վարդապետի անունը կը կրէ, կը անոնենք որ ասոր սկիզբը կը գտնուի նախարան յիշատակարան մը, որուն կը յաջորդեն պիսոք և պատուէրս ուղղուած զրքէն իր ապագայ տիրոյ և այս վերջինին պատասխանը։ Կարենը և հետաքրքրական այդ էջերը կ'առնենք ամբողջութեամբ։

Ողորմելիս Վարդան նուազեալ ըստ^(*) յամենային գործառնութեան բարեաց, յետինս յուսումնակըս և յորդիս մաւր մերոյ Միոնի նորոյ, մեծափափագ բաղանաւոք, և աստուածային անյագ ցանկութեամբ, և մեծ սիրով հաւատոյ, յուսանելն մեր և ի շրջելն զատուածային կտակարանն, հաւաքիցի զայս աստուածաբրնակ տառս, որ և գտանէի բան ճակողակի, վկա և ջատագով ճշմարտութեան և ուղղափառ հաւատոյս, և յանդիմանէի երկանակացն և այլոց հերձուածողացն, ի նուրբ զիրս և ի մեկնիչս, կամ ի թուղթս, և ի Հաւաքման Գրիս սուրբ Հայրապետացն, զոր արարեալ են ընդգէմ ամենայն հերձուածողաց։

Նա և զարձեալ մեր յաստուածապահ Հայրապետական աթոսս, որ կոչի Հոռոմէկա, յառաջի ամի Հայրապետութեան Տեառն Յոհանիսի, ժողովեցաք զՀաւաքման Կիրս սուրբ Հայրապետացն և մաքրափայլ վարդապետացն Հայոց, զոր արարեալ են յիւրաքանչիւր ժամանակս ընդգէմ հերձուածողաց, ուղիղ գաւանութիւն հաւատոյ առաջնոց սուրբ հարցն հետեւելով։ ուր յեղերեալ աշխատանաւոք, և արարի ծայրագաղ և համառաւտո, միայն զաղցոյ վկայութիւնս առեալ առանց աւելորդ բանի, որ յերկարագոյնս ճեմիր, ոչ ի մէնջ և ոչ յառաջնոցն, և ժողովեալ կատարեցի զատիքին Հայոց ՈՒՆ [= 1205], ի թագաւորութեան Հայոց Լեռնի՝ որդուոյ Ստեփանէի։

Եւ արարի քեզ, ով սիրելի, առձենն պատրաստ զէն և անաշխատ գիւտ ընդգէմ այլասենց թիւրագարք երկամիս քննութացն։ Թանգի խոցէր հոգիս յորժամ սիրաւոք բաժանմանն տպիտարար խաւսէին վասն երկու բնութեան, և կամ վասն այլ ինչ խորհրդոյ։ Եւ այս հարկ արար մեզ լինել ձեռնամուիս ի յայս գործ աստուածային։ Ո՞վ սիրելի եղբայր մեր և գլուխ եկեղեցոյ սրբոյ, զոր առեալ յարգեցն որպէս երկիր արգաւանդ և ուսուացիս զիմի պատժենցիս ընդ քանքարաթաքոյցն։

Եւ արդ յերեսս անկեալ աղաչեմ առ ով անկանի սա, և կամ ով աւգամի ի սմանէ, և հոգւով լուսաւորիք ի լուսոյ սորլա, յիշեցէք զեղկելիս Վարդան և զծնաւզն իմ

(*) Թերեւս պիսի ըլլար՝ նուազեալս։

և զեղբարսն և զուսուցանուածնն մեր, զի ապրեցուք Աստուծով և աղաւթիւք ձերովք ի յարակէզ և յանչիշանելի բորբոքմանէ հրոյն յաւիտնից և յանսպառ տանշանացն. և որք յիշէք և գուռք յիշեալ եղերուք առաջի Աստուծոյ ի բարի հատուցումն նորա:

Եւ ամենայն ոք որ զսա փոխէ և նորոգէ, աղաչեմ գրել և նորոգել զսակաւ բան յիշատակիս մերոյ վարծու մեզ յապագայնն, որովք յիշիւք մեք յիշ մահու. զի կարաւլ է Աստուծ և ողորմած ի ձեռն այլոց այլում ողորմել: Եւ որ լսաւզ լինի և գրէ զսակաւ բան յիշատակիս այս, գրեցէ Աստուծ և նորոգեցէ զանուն նորա ի դպրութիւն կինացն յաւիտնից, յանսպառ և յանթառամ ժառանգութիւնն ընդ ամենայն սրբոց իւրցու:

Խաւակ եւ պատուեք վրոց առ այնոսիկ որ ժառանգեն զսա յապակա աւուրսա:

Յանմատոյց լուսոյ կամեալ են ճանապարհ իմ, և ճառագայթարձակ հրարութ շահիս պայծառացեալ են նրագոյն շահիւք իմ: Որք հաւատով և անթերի մտաւք դիմէք առ իս, եկայք ուրախութեամբ զհետ ծագման լուսոյ իմոյ, և տարայց զձեզ ի քաղաքն իմ սուրե, ցնծալով խաղացէք, և մաէք ուրախութեամբ ընդ դրունն նորա: Ընտիր են շինուածք նորա, և շափիլայ են քարինք պարսպի նորա: Վերնաշեմն յասկոյ սրբոյ, յականց զմրլիւոյ ներքնաշեմն նորա: ի կիրանանէ է փայտ նորա, և երազ պատրաստիցան մանկունք քաղաքի իմոյ: խորանք որ ոչ չարժեսցին ցից նորա:

Մաքուր է ճանապարհ նորա և հորդեցաք զաւիզու նորա: ի զնալզ քո մաքրեացիրտ քո և տեսցիս զփառս քաղաքի իմոյ: Դուստր եմ ես հաւըն լուսոյ և տեսանեմ զերսան ծննդեան և բզիման նորա, և յամենայն ժամ համարձակիմ առ նա:

Որք կամիք տեսանել զնա, քազկաւք բարձէք զիս, և միշա ի գերա ստեաց և սրբոց ձերոց կառուցէք զիս: Բարձր բարբառով ընթերցիր, և ի միտս քո պահեաց զոր ուսար յինէն: Ընկալ յինէն լոյս և մատիր առանց երեսաց ամաւթիոյ առ Տէր քո, և շրջեա համարձակ՝ յանաչառ և յահագին հրապարակս նորա: Պայծառ են քան զա-

րեգակն և զլուսին զամբարք իմ, և որ զա առ իս՝ ընդ աշմէ աթոռոյն տեսցէ զիս: Հիմունք իմ հաւասար անդընդոց, և զլուսիս իմ բարձր է քան զկամբարս երկիրց:

Ունիմ առ իս զամենայն մարգարէսն և զառաքեալոն, զաւմարեալ իմ առ իս զհայրապեսն և զգարդապեսն անթիւս:

Եկայք առ իս մանկունք Սիոնի սիրաւզք Աստուծոյ, և ցանկացողք աւրինաց նորա: Աւարութ զիս առաջնորդք և ժողովուրդք, և տարայց զձեզ առ երկնաւոր հայրն իմ: Առ իս է բնակեալ Աստուծ հայր իմ, և ես քաղաք հանգստեան եմ հոգւոյ և որդուոյ նորա: Կարմերագոյն է ծաղկի իմ, և անձառների է հոս նորա: Առ զիս ի հաւասար սրբի քո, և ուսուց բարձ զիս: Քաղցր եմ ես ի կոկորդո ձեր ճաշակողացն զիս, և պարարտ է համ իմ ի ծամելիս նոցա որք հաւատով կարողանան ճաշակել զիս:

Բանալի եմ ես սրախ քո, որդեակ իմ,

և ի բարզում բաւէ զարութիւն իմ: Հերձուածուածք մի ընծայեր զիս, զի թերահաւասից հակառակ եմ ես: Շատ օղբառ թէ տաս զիս, զի ազրով և ժանկով լցցին զիս:

Հաւատարիմ արանց չնորհեա զիս, և տէկտ որ խնդրէ մի արգելուր զիս: Եւ գրաւական քեզ ընդ իմ ընկալ զսերտ հաւատու նոցա:

Տես, մի մուսահար զսէր իմ: շրթամբք քո սրով համբուրեալ զիս, և ի սնենկ սրախ և հոգւոյ քո բնակեցն զիս: Ճարտարասան իմաստեց չնորհեցէք զիս, զի պախարտիկեցն զհերձուածուոյ ի ձեռն լուսոյ իմոյ:

Պատասխանի Մարգոյն առ Գիրքս:

Վա՛, ինձ թէ ձրի կամ ընդ վայր ի թերահաւատու, կամ ի տպէտս տամ զքեզ հաւատ իմ և յայս իմ: այլ մտաւ քս ի հոգիս, և հոգւովս ի շունչս, և շնչովս յարիւնս, և արիւնովս ի մարմինս ծրաբեալ պահեմ զքեզ, նարգոս և կինամն և տաշի իմ: և ի բաժանել հոգւոյս չէ ինձ հնար հեռանալ ի քէն, այլ ընդ մարմնոյս ի գուրն մահու մուծանեմ զքքեզ, որ զոյ յաւորն ահազին պատկեցն զգուուի իմ (էջ 261-7):

Իսկ զբքին վերջը կայ ուրիշ վերջարան յիշատակրան մը, որուն դաւանաբանական մասերը, ինչպէս նաև զբքին բովանդակութեան ամփոփումը ներկայացնող տողերը

զեղչելով՝ կու տանք պատմական արժեք ունեցող հատուածները միայն։

Ես ողորմելիս Վարդան, որ հաւաքեցի զլուսափայլ մարգարիտս հաւատոյ զատուած արնակ զայս տառս, հետեւով աստուածազան և բարեփառ սուրբ հարցն ուղղից զայսանութեան, հաւատով խոստովանիմ անթերի մոտեց զհամագոյ և զամենասուրբ երրորդութիւնն անբաժանելի և յամենանի կատարեալ ։ . . .

Աւընեել է ամենաբարի բնութիւնն Աստուածոյ կենցանարքի և կինդանարքի, որ զաւրցոյց զիս աւարտել զայս, և կատարեաց զցանկութիւնն իմ զոր ունելի ի վազ ժամանակաց։ Եւ կատարեցի զայս ի զառն և ի նեղ ժամանակիս, ի թուականութեանս Հայոց ի ՈԾԶ [= 1207], ի հայրապետուաթեան Տեսոն Յոհաննէսու, և ի թագավորութեանն Հայոց Լևանի ի Կիրիլիս, և լցաք զայս աստուածային գանձիք հաւատոյ՝ ըգրանս սրբոցն ընդգէմ հերձուածուացան։

Եւ զու իմաստուն ընթերցաւզդ միամիտ և միր լեր, և յայնժամ իմանաս թէ ո՞րքան հաւատոյ հաստատութիւն զցցես ի սմա։ Բայց եղեալ է վկայութիւնն յետ և յառաջ և ի միջին, և գու գիտ ե նշանակեսչիր զի խառնեալ են ընդ միմեանս։ ուսիր և ուսոյ, զի Աստուածոյ այս է ընդունելի։ զի բերան իւր կոչեաց զնա որ հանէ զպատաւականն յանարգէն։

Եւ Աստուած զիտէ թէ ո՞րքան եմ աշխատել ի հաւաքել սորոս։ Թանգիր եղաք ի սմա՝ առաջին զսակաւ բան մեր յիշատակին։ Երկորդ զպատուէր գրաց առ որ ժառանգեն զայս Երրորդ զդաւանութիւն Սուրբ Երրորդութեան։ . . .

Այս քեզ լուծումն զոր արարաք բազում աշխատանաւէք. ընկալ և զմեզ յիշեայ (էջ 502-8)։

Արդ համեմատելով վերոգրեալ յիշաւակարաններու ոճը, ոգին, և մասնայատուի բացատրութիւնները՝ Վարդան Այգեկցիի ծանօթ այլ գրուած քններուն հետ, կը հասնիմ այս եղաւակցութեան թէ ներկայ և հաւատարմատօ հաւաքածոն կազմողը Վարդան Վրդ։ Այգեկցին է։

Այժմ գառնալով Կարապետ Սպիտկոսի վերև յիշած ձեռագրին — օրինակ-

ուած 1209 թուին — յիշատակարանին մէջ կը հանգիպինք սա տողերաւն . . . Գրեալ և փոխեալ յաւաշին օրինակէն, ձեռամբ մեղապարտ Վարդանայ . . . և Արդեօք այս մեղապարտ Վարդանը ինքը Այգեկցիին իսկ է. թէ ուրիշ Վարդան մը Աւելի հաւանական կան կը թուիր թէ Այգեկցիին ըլլայ, որ իր նոր հաւաքած և Հաւատարմատօսին համաման, կամ թիրես չափով մը փոփոխուած, մէկ օրինակութիւնը կը զրկէ իր ծանօթներէն մէկուն, որ այժմ անձանօթ է մեղիր։

Հոս կ'արժէ յիշել կտրգ մը հետաքրքրական հեղինակներ և գրուած քններ, ուրնեցմէ վկայութիւններ առնուած են սոյն Հաւաքածոյին մէջ. լինպէս,

Դիսնէսոս Աղեքուանգրացի (էջ 308-310). Ա. Խգնատիս (310-312). Յուլիոս Հասոմ. Թուզթ առ Դիսնէսոս (317-9). Երկութա [= Երեքթեայ] Անտարուոս Հայրապետի (էջ 355). Տիրոսի Անտարուոս Ասորուց (355-6). Ապլիքերսի Սպիտկոսոսի և Մարտիրոսի (356). Տիրութէոս (358-366)։ Ի Տիրանոյ Վարդապետին Թղթէն առ առ Սինաքերիմ. աԶկնի Բ բնութիւն ասոսի անէծք . . . (382-3). Ապելեայ Քերսոնի պատուի (444). Յօվանիայ Արձնայ Եպուի (444). Թօփոնի Եթոպացոց Եպուի (444). Պանփիւեայ յառ ի Ակիւթացին Ցառէն (444). Եղիսաբէտ (445). Ի Թղթէն Առիստիգա ուղղափառ փիլտսոփայր. աԶատինայն կիրս կրեալ ճշմարիտն հանգերձ մարմնով (էջ 445)։ Հմմտ. Մատ. Հայկ. Թրգմ. Նախնեաց, Վենետիկ, 1889, էջ 320). Ի Թղթոյն Պուեմոսի Կոլնթոսի եպիսկոպոսի. աԹանգիր Բանն մարմին եղան . . . (446). Դիսնէսու Եղեսիս Եպուի (446). Երինիսու Լոկտոնոյ Եպու. « . . . Եւ գարձեալ ասէ մերձեցա առ կիրն իմ մարգարէ . . . (էջ 446-7)։ Հմմտ. Կիրք Հաւատոյ, էջ 244). Ի Թղթէն զոր գրեաց Եղնակ առ Մաշտոց (448). Ամշղեպսի [= Ամփիլուսոս] յիշնացուց Եպու. ի. և Նոյն ինքն թագաւոր և Ած. . . և զմուռ զան չարչարանացն (452-3)։ Հմմտ. Մատ. Հայկ. Թրգմ., էջ 295. Նաև Զես. Երևանի, թ. 4425). Ի հաւատոյ Ցառէն Դաւթի Հայոց Վարդապետի անյաղթ փիլիսոփայի. և Բանն Ած կատարեալ մարմնացեալ . . . »

ԳՐԱԴԱՐԱՆԻ ԱԿՏՈՒԱՆ

**A CATALOGUE
OF ARMENIAN MANUSCRIPTS**
By Sirarpie Der Nersessian
Dublin, 1958

Հայերէն ձեռագիրներու ցուցակագրութեան և ուսումնամասիրութեան նույիրուած գործերու շարքին վրայ արժէքաւոր յաւելում մը արձանագրուեցաւ Պրօֆ. Ալիքարփի Տէր Ներսէսեանի պատրաստած զոյգ հաստրներով, որոնց առաջինը կը Ներկայացնէ Chester Beatty Մատենագրանի հայերէն աւելի քան 60 ձեռագիրներու ցուցակագրութիւնը. իսկ երկրորդը նոյն ձեռագիրներէն առնուած նկարներու նմոյներ, զետեղուած 67 թիրթերու վրայ, մաքուր ապագրութեամբ:

Օր. Տէր Ներսէսեան սոյն Ցուցակը և Ներածութիւնը աւարտած է 1951ի ամառու: Ապա մերձաւոր արենելքի մէջ իր անցուցած տարեկոր ժամանակի ընթացքին քաղած նորանոր տեղեկութիւններով աւելի ևս հարստացուցած է իր երկասիրութիւնը:

Գիրքին Ներածութիւնը, էջ xix-xliv,

(454-5): ի հաւատոյ Ճառէն Մովսէսի Քերթաւահաւըն. ԱՄարդկայինն ասուածային, և որ յերկրէ՝ յերկնից եկեալ ...» (455-6): Թէսփիւս Ալեքսանդրոս (459): ի հաւատոյ Թղթսյն Ստեփանոսի Սիւնեաց Եպս.ի. Պատասխանի Անտիոքա Պատրիարքին (էջ 460-462: — Հմմտ. Գիրք Թղթսյոց, 331): Մանուէլի Եպս.ի. վասն տաւնի Խաչըն. Շի ձեռն Կոստանդիանոսի մեծի հաստեցաւ ...» (463: — Հմմտ. Տաշեան, Ցուցակ, էջ 768 ա): ի հարցաքննութենէ Ասորց. և Ասէ Խոսհակ առ Վրէմ Վարդապետն իւր ...» (467-470: — Հմմտ. Տաշեան, Ցուցակ, էջ 722 բ):

Վերոյիշեալ գրողներէն ոմանք ուրիշ տեղ չեն յիշուած ցարդ և շահեկան են մեծապէս:

Ն. ԵՊՍ. ԾՈՎԱԿԱՆ

Հայկական մանրանկարչութեան վրայ ընդհանուր տեսութիւն մըն է, ուր ցոյց կը տրուին յատկանչական գիծերը տարրեր գպրոցներու, և անոնց առընչութիւնները իրարու հետ: Հայ մանրանկարչական արուեստը ունի իր սեփական նկարագիրը, չնորիւ այն իրողութեան որ հայ արուեստագիտները պարզ ընդօրինակողներ չեն եղած, այլ կրցած են օտար արևուտներու տարրեր և նոյնիսկ հակամարտ հոսանքները խանձել իրարու ճարտարօրէն և ծնունդ տալ ինքնուրոյն ստեղծագործութեանց, մանաւանդ այն գարերուն երբ Հայերը ունին անտեսական և քաղաքական ինքնիշխանութիւն:

Ցեռագիրներու նկարագրութիւնները տրուած են մանրամասնորէն, հանդերձ նկարներու ընդգրածակ բացատրութեամբ: Ապա յաւելուածարար կցուած են ճոխ դիւտողութիւններ՝ ձեռագրի Գրչին և նկարչին ոճին, կենսագրութեան և այլ աշխատութեանց մասին: Այս կերպով հատորը ըստացած է մանագիտական ուսումնամասիրութեան մը հանգամանքը (էջ 3-193):

Ցուցակագրուած ձեռագիրները ընդհանուրագէս եկեղեցական գիրքեր են, այսինքն Յ Աստուածաշունչ, Յ Աւետարան, 1 Նոր Կտակարան, 2 Սաղմոսարան, 5 Շարական, 4 Ճաշոց, 4 Յայսմաւուրք, 1 Մաշտոց, 1 Տօնացոյց, զանազանք 5, և հատակուորք 7. ընդամենք 67 կտոր: Գալով անոնց հնութեան՝ կը բաժնուին սապէս. ԺԲ. Դար 3, ԺԳ. Դար 3, ԺԴ. Դար 7, ԺԵ. Դար 8, ԺԶ. Դար 8, ԺԷ. Դար 33, ԺԸ. Դար 5: Նկատելի է որ այս Ցուցակին պարունակած ձեռագիրներուն կէսը Աւետարան է. միւս կողմէ գարձեալ կէսը կը պատկանի ԺԷ. Դարուն:

Ցարգէլի Հեղինակուհին կողմէ օգտագործուած բազմալեզուեան մատենագրութիւնը — որ տրուած է հինգ մեծագիր և երկսիւն էջերով (195-199) — և համեմատուած մեծաթիւ ձեռագիրներու ցանկը (էջ 211-216) ի յայտ կը բերէն ոչ միայն իր լայնածաւալ հմտութիւնը, այլ նաև խղճամիտ և ծանր աշխատանքը, որով կարելի եղած է ի գլուխ հանել այս հոյակապ և պատուարեր երկը:

ՆՈՐԱՅԻ ԵՊՍ.

**“ԼԻԱԿԱՏԱՐ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ
ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ
ՀԱՄԵՄԱՏՈՒԹԵԱՄԲ 562 ԼԵԶՈՒՆԵՐԻ”**

Ն Ե Ր Ա Խ Ո Ւ Թ Ի Ւ Ն

ՀՐԱԶԵԱՑ ԱՃԱԽԵԱՆ — ԵՐԵՎԱՆ — 1955, Էջ 656



Քրքին երկրորդ մասը նույիրուած է լեռուներու գասակարգման:

Բ. — Լեզուներու Դասակարգութիւնը:
— Հետեւեալ ստորաբաժանութերը ունիք: —
1) Լեզուներու ցեղակցութիւնը, 2) Հնդկարգական ընտանիք, 3) Մեծական ընտանիք, 4) Թամեան ընտանիք, 5) Ափրիկեան ընտանիք, 6) Աւստրական ընտանիք, 7) Տրավիտեան ընտանիք, 8) Անդաման ընտանիք, 9) Ջին-թիպեթական ընտանիք, 10) Աւկրո-միննական ընտանիք, 11) Կովկասեան ընտանիք, 12) Ալթայական ընտանիք, 13) Ճափաներէն և Քորէյերէն, 14) Խյուռ, 15) Գերհւեսիսային կամ հնասիական լեզուներ, 16) Ամերիկեան լեզուներ, 17) Աւստրալիական լեզուներ, 18) Անյայտ լեզուներ, 19) Լեզուներու վիճակագրութիւնը և գասակարգումը, 20) Լեզուաշնտանիքներու բնորոշումը, 21) Նախալեզուներու գերականգնումը, 22) Բնդհանուր նախալեզու:

1) Լեզուներու ցեղակցութիւնը: — Եթէ բազգատենք ֆրանսերէնը իտալիերէնի, սպաներէնի, բրիտանկալիերէնի, սումաներէնը, բարդութիւնը ու առաջ բերաւ այդ լեզուները: Աւրեմն ֆրանսերէնը, իտալիերէնը, սպաներէնը, բրիտանկալիերէնը, սումաներէնը, սումաներէնը և բրազիլիանալը, որնիք այսօր իրեւ անջատ և անկախ լեզուներ գոյութիւն ունին, հոովկէտայիներէն առաջ չկային: Անսնք ուշ ժամանակ յառաջացած լեզուներ են, ծագած միենոյն մօրմէն՝ որ է լատիներէնը: Ահաւասիկ նոյն հատուածի լատիներէնը: — Sic dilexit Deus mundum, ut filium suum unigenitum daret. Նոյնպէս եթէ բազգատենք գերմաներէնը, չուէտերէնը, նորվեկերէնը, գանհերէնը, հոլանտերէնը և Փրիզերէնը, կը տեսնինք որ այս լեզուներն ալ իրարու նման են և կը ծագին կնի գերմաներէնն: Ահաւասիկ նոյն օրինակը այդ լեզուներով: —

Գերմաներէն: — Also hat Gott die Welt geliebet, dass er seinen eingeborenen Sohn gab.

Պորթուգալիերէն: — Deus amou o mundo de tal maniera, que deu o seu filho unigenito,

Բունանչ: — Deis ha tant amâ il muond, ch'il ha det seis unigenit figl.

Ռումաներէն: — Dumnezeu iubi lumea atât de mult, încât dete pe fiul său unul născut.

Ի՞նչ է այս զարմանալի նմանութեան պատճառը: Պատճութիւնը կը լուսաբանէ մեզ այս առջութեամբ: Հոովկէտայիներու նուածումով, լատիներէնը մտաւ իտալիա, Պաղպիա, Ապանիա, Խումանիա, Բորբուկալ, Բրոգանս, և այդ երկիրներէն իրաքանչիւրին մէջ անկախաբար և հետաքանչ փոփուուելով, առաջ բերաւ այդ լեզուները: Աւրեմն ֆրանսերէնը, իտալիերէնը, սպաներէնը, բրիտանկալիերէնը, սումաներէնը, սումաներէնը և բրազիլիանալը, որնիք այսօր իրեւ անջատ և անկախ լեզուներ գոյութիւն ունին, հոովկէտայիներէն առաջ չկային: Անսնք ուշ ժամանակ յառաջացած լեզուներ են, ծագած միենոյն մօրմէն՝ որ է լատիներէնը: Ահաւասիկ նոյն հատուածի լատիներէնը: — Sic dilexit Deus mundum, ut filium suum unigenitum daret. Նոյնպէս եթէ բազգատենք գերմաներէնը, չուէտերէնը, նորվեկերէնը, գանհերէնը, հոլանտերէնը և Փրիզերէնը, կը տեսնինք որ այս լեզուներն ալ իրարու նման են և կը ծագին կնի գերմաներէնն: Ահաւասիկ նոյն օրինակը այդ լեզուներով: —

Գերմաներէն: — Also hat Gott die Welt geliebet, dass er seinen eingeborenen Sohn gab.

Հույնաներէն: — Alzoo lief heeft God de wereld gahad, det hij zijnen eeniggeboren zoon gegeven heeft.

Թրիքերէն: — God hat de wräld sa lleave, det hy syn ienichstberne soan jown hat.

Թառիերէն: — Saaledes elskede god Verden, at han gav sin son den enbaarne.

Նորվեկերէն: — Saa har gud elsket verden, at han gav sin son den enbaarne.

Շուշտերէն: — Sa älskade gud vörlden, att han utgav sin enföldde son.

Բուլղարերէն: — Svo elskadî guô hei-minn, ad hann gaf son sinn eingetinn.

Այժմ, եթէ բազգատենք լատիներէնը, սլաւերէնը, կոթերէնը, իրաւաներէնը, կին յունարէնը, ալպաներէնը, լիթուաներէնը, հայերէնը, սահնակրիտերէնը և պարսկերէնը, պիտի տեսնենք որ այս լեզուներն ալ իրարու հետ ունին ակնբախ նմանութերններ, թէս ոչ այնքան շեշտուած որքան վիրոշիչալինը!

Ահաւասիկ օրինակներ: —

1. — Մայր: — Սահնակրիտերէն մատár, գենտիերէն մատár, կին պարսկերէն մատár, պահաւերէն մատ, պարսկերէն մադար, աֆցաներէն mor, յունարէն խեռո, բառու, լատիներէն մատեր, կին բարձր գերմաներէն muoter, գերմաներէն mutter, կին սլավոներէն mati, լիթուաներէն mótyna, լիթերէն máte, Պահն իրաւաներէն máthir, կին իրաւաներէն móder, ալպաներէն motre և այլն.

2. — Տանի: — Սահնակրիտերէն dáca, գիշուերէն desh, բաշայերէն լասը, գենտիերէն dasa, պահաւերէն պարսկերէն dah, քիւրտիերէն, բիլումերէն deh, յունարէն ծոչա. լատիներէն decem, կոթերէն tainhun, կին բարձր գերմաներէն zéhan, գերմաներէն zehn, անգլերէն ten, կին սլավոներէն deseti, լիթուաներէն de'szimtis, կին իրաւաներէն deich, ալպաներէն djets.

3. — Կուն: — Սահնակրիտերէն tuvám, թոխարերէն tu, tuwo, գենտիերէն tum, tvám, ቱ, կին պարսկերէն tuvam, պարսկերէն ն, յունարէն ն, օն, ալպաներէն ն, լատիներէն tu, կոթերէն ն, կին բարձր գերմաներէն du, կին սլավոներէն ty, լիթուաներէն ն, կին իրաւաներէն ն.

4. — Մեռնի: — Սահնակրիտերէն mriya'te, գենտիերէն miryeite, կին պարսկերէն amriyata, պահաւերէն murtan, պարսկերէն murdan, լատիներէն morior, կին սլավոներէն mreti, լիթուաներէն mir'ti, կին իրաւաներէն marb:

Նմանութիւններ նկատելի են ոչ միայն արթաներու և բառերու միջև, այլ նաև մասնիկներու, հոլովակն և բայտկան վիրաշարութիւններու.

Ներկայ առաջին դէմքին համար: — Սահնակրիտերէն a'dmi, լիթուաներէն édmi, կին սլավոներէն jami, յունարէն 'éðomax, հայերէն ուտեմ, որոնց բալորին մէջ կայ և ձայնը:

Եթէ քննութեան ենթարկենք լիշտերկ- րականի շաւրջ խօսուող լեզուները, ինչպէս ասորերէնը, փիւնիկերէնը, իրայիրէնը, արարերէնը, եթովպերէնը, և աւելի հետո՝ ասուրերէնը, բարելոնիրէնը և քաղցիրէնը, վիրահասող կ'լըլլանք որ այս լեզուներն ալ սերտ նմանութիւններ կը ներկայացնեն ի- րարու հետ: Օրինակ մը այս լեզուներէն:

Հիմք: — Ասորերէն Hamesh, hamsha, ա- րարերէն hamṣa, իրայիրէն hameš, փիւ- նիկերէն hmsh, սապայիրէն hmsh, եթով- պերէն hames, ասուրերէն hamshi.

Նմանութիւններու զանազան ձևեր կան: Իրօք, լեզուներու մէջ կան նուև պատահա- կան նմանութիւններ: Օրինակ, հայերէն բուև բարորովին նման է չինարէն բուև քնացած, քնուու բառի հետ Բայց այս նմանութիւնները կը սահմանափակուին միայն փոքրաթիւ բառերու և ոչ թէ լեզ- ուի ամբողջ կառուցուածքին մէջ, մինչև հոլովամը, խոնարհումը, մասնիկները և բառակազմական մանր նրբութիւնները: Ցե- ղակից կը կօչուին այն լեզուները, որոնք միենույն ծագումը ունին: Գրատական բա- ցարութիւններ, լեզուներու ցեղակցութիւնն ըսկով կը հասկնանք այն պատմական իրա- զութիւնը, որով լեզու մը գարերու ըն- թացքին, առաջնահական փոփոխութիւննե- րով անցած է վիճակէ մը ուրիշ վիճակի մը: Բոլոր այն մեծ ու փոքր լեզուները որոնք ցեղակից են, այսինքն միենույն ծագումը ունին, կը կազմին ընտանիք մը: Պատկե- րասոր բացարութիւններ, իւրաքանչիւր ըն- տանիք ունին իր նախամայրը, զոր կը կո- չենք նախալեզու և որ բոլորին ծնունդ տուողն է: Ամէն նախամայր ծնած է մի քանի մայր լեզուներ, որոնք իւրաքանչիւր ըն- տանիք կը կօչուին նոյն լեզուներ: Այս քոյր լեզուները իւրամէ բաժնուելով և ապրիլս իրենց ուրոյն կեանքը, իրենց կարգին ծնունդ տուած են զանազան լե- զուներու, որոնք նախարդներու հետ բազ- կատելով կը կօչուին նոյն լեզուներ: Ասոնք ալ, իրենց մէջ անելով և զարգանալով, ծնած են բարբառներ և ենթարբառներ: Լեզուներու ցեղակցութեան ասորինանք կա- րելի է պատակերացնել հետեւալ աղիւսա- կով: —

1. — Նախալեզու,
2. — Մայր լեզու,
3. — Նոր լեզուներ,
4. — Բարբառներ,
5. — Ենթաբարբառներ:

Ներկայիս, իւրաքանչիւր լեզուախումբէն կենդանի են ենթաբարբառներ, բարբառներ և նոր լեզուներ։ Մեռած՝ բայց գիրքերու մէջ կենդանի են տակաւին զանագան մայր լեզուներ։ Իսկ նախալեզուն բոլորովին գոյրի է գոյութենէ և լեզուարանութենն է, որ նարաւորութեան սահմանին մէջ զայն կը վերականգնէ։ Աշխարհի բոլոր լեզուները տակաւին քննութեան չեն ենթարկուած։ Լեզուարանները, առհասարակ եւրոպացիները ըլլալով, բնականարար շահագրգուուած պիտի ըլլալին միայն եւրոպական՝ և իրենց լեզուներուն ցեղակից լեզուներով։ Այս կէտը անհամեշտ է մասնաւանդ ծանօթէն անձանօթին երթաւու սկզբունքին։ Ապա թէ ոչ, գիտութեան համար հիւրի և ստարի, մէծի և փոքրի, թոյրի կամ ուժեղի խարութիւն չկայ։ Ամենէն անկարեսոր թուոզ կէտն անգամ, գիտութեան համար յանկարծ չափազանց մէծ կարենութիւն կը ստանայ։ Մինչև հիւրա եղած քննութիւնները երեան հանած են միայն մի քանի լեզուական ընտանիք, իսկ մացաւանները կամ բնաւ և կամ ըստ կարենութեան չեն քննուած, ինչպէս՝ Ափրիկէի, Աւստրալիոյ և Ամերիկայի բնիկներու լեզուները։ ուստի անոնք կը կազմէն անուանական խմբակցութիւններ։ Մանրամասնութիւնները ձգելով յաջորդ գլուխներուն, հոս կը թուենք իսկական և անուանական ընտանիքները։ —

Ա. — Զնդեւրովական ընտանիք, որ կը տարածուի խալանտայէն սկսեալ, Միջերկրականի հրաւիսային եղերքով, մինչև Հնդկաստանի ծալրը։

Բ. — Մեմսկան ընտանիք, որ կը տարածուի Եթովպիայէն սկսեալ, Միջերկրականի արեելեան եղերքով, մինչև Պականի մէջ։

Գ. — Քամեան ընտանիք, որ կը տարածուի ամառայէն Ափրիկէի մէջ։

Դ. — Ափրիկան ընտանիք, որ կը սահմանական ընտանիքներու, որոնք գոյութիւն ունեցած են չըջան մը և խօսուած թերես շատ ընդգրածակ տարածութեան վրայ։ Ասկայն,

Ե. — Հոդենդու եւ Բուօւէն (Ափրիկէի հարաւաը)։

Զ. — Աւստրալիան ընտանիք, որ կը սկսի Մատակասպար կղզիէն, և Հնդկաց ովկիան նոսի կղզիներուն վրայէն կը հասնի մինչև Ովկիանիոյ ծալրը։

Է. — Տրավիտեան ընտանիք, Հնդկաստանի հարաւային մասին մէջ։

Ը. — Անդման ընտանիք, Հնդկաստանի արեելեան կողմը։

Թ. — Զին-Թիաբերական ընտանիք, Արեելեան Ասրու մէջ։

Փ. — Աւկրա-Ֆիննական ընտանիք, որ կը տարածուի Եւրոպայի միջին և հրաւիսային մասիրուն Ֆինլանդայի և Հունգարիոյ մէջ, մինչև Աւրալիան լեռներու ասիական մասը։

ԺԱ. — Կովկասեան ընտանիք, որ կը տարածուի Կովկասեան լեռնազդթայի երկու երեսները։

ԺԲ. — Ալբայական ընտանիք, որ կը տարածուի Միջին Ասրու մէջ, Աւրալիան լեռներէն մինչև Խաղաղական ովկիանոսը։

ԺԳ. — Ճափոն-Քուռեկական ընտանիք, որ կը տարածուի նոյն երկրներուն մէջ։

ԺԴ. — Ալբերիկեան լեզուներ (հրաւիսային և հարաւային Ամերիկայի բնիկներու լեզուներն են)։

ԺԵ. — Աւստրալիական լեզուներ՝ Աւստրալիոյ մէջ։

